№ 158 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 25

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 25 № 158

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ **1906** ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։ յուլիսի 1-ից մինչև 1 հոկտեմբերի 2 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Բագուի բաժանորդներին լրագիր հասցնելը խմբագրութեան տուած հասցէներով վերցրել է իր վրա Թադէոս Բունիաթեան (գրավաճառանոց, հայոց եկեղեցուն կից), ուստի լրագրի համարների ուշ կամ անկանոն ստացվելու դէպքում Բագուի բաժանորդները պէտք է դիմեն նրան։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով։ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Հասցէն փոխելու համար պէտք է վճարել 40 կոպէկ։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Յայտարարում ենք ի գիտութիւն

«ԿԵԱՆՔԻ»

Բաժանորդներին, որ կառավարութիւնը դադարեցրել է մեր Թերթի հրատարակութիւնը և խմբագիր-հրատարակիչ Բ. Իշխանեանին ենթարկել պատասխանատուութեան՝ «Զարդերի անվերջ քաղաքականութիւնը Ռուսաստանում և Անդրկովկասում» (№ 13) և «Պետական Դումայի վիժումը» (№ 18) վերնագրով առաջնորդողների պատճառով։

Մեր բաժանորդներին ինչ ձևով գոհացում տալու մասին կը յայտնենք մօտիկ ապագայում։

Կարելի է խմբագրութիւնից ստանալ «Կեանքի» բոլոր համարները կոմպլէքս № 1—18։

Խմբագրութիւն «Կեանքի»

առ. (ու. կ. ե.) 2—5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դարձեալ մի քանի նկատողութիւն. Վերջին տեղեկութիւններ. Ընտրութիւնների շուրջը. Շարժումներ. Գանձակի շրջանում. Մ. Հերցենշտէյն. Տեղեկութիւններ Երևանից. Ամնիստիայի լուրերի առիթով. Ի՞նչ տուեց Պետական Դուման. Մայրաքաղաքի կեանքից. Տեղեկութիւններ գաւառից. Մի բացատրութիւն հայ-կաթոլիկ հասարակութեան. «Գաղթականները». Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԴԱՐՁԵԱԼ ՄԻ ՔԱՆԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

V

Կարապետ վարդապետը ինքը նպաստում է խախտելու իր բռնած դիրքը։

Խօսելով մի շարք կարևոր հերթական հարցերի մասին, որոնք կարօտ են լուծման, բացատրելով, որ այդ հարցերի լուծման համար անհրաժեշտ են թէ ընդհանուր, վարչական և թէ մասնագիտական ուսումնասիրութիւններ, և առանձնապէս ընդգծելով, որ կենտրօնական ժողովը անկարող կը լինի այդպիսի ուսումնասիրութիւններ կատարելու, նա ասում է հետևեալը՝

Եւ մի՞թէ նոյնիսկ հիմնական խնդիրների սկզբունքով որոշելը գործնական մեծ քայլ չի լինիլ։

Ո՞վ պէտք է հակառակէ, որ ժողովը միջոցներ ձեռք առնէ գործադրել տալու այնպիսի որոշումներ, որոնք ընդհանրութեան պահանջ են ներկայացնում և գործի բարելաւութեան պիտի ծառայեն։

Ահա այստեղ, այս տողերում կ. վ.-ն ինքն իրան պատասխանել է, ինքը մեր տեսակէտն է իւրացրել և իր նախկին ասածները հերքել։

VI

Եւ արդարև, եթէ կենտրօնական ժողովը իր առաջին նստաշրջանում անկարող կը լինի բոլոր հարցերի մասին ունենալ իր ձեռքին լուրջ ուսումնասիրութիւններ, նա այն ժամանակ կընդգծէ «հիմնական խնդիրների սկզբունքով որոշելը»։

Իսկ եթէ նա գործ կունենայ այնպիսի հարցերի հետ, որոնց վերաբերութեամբ նա բաւականաչափ նիւթ ունի հեղինակաւոր որոշումներ կայացնելու, այն ժամանակ նա «միջոցներ ձեռք կառնէ գործադրել տալու այդպիսի որոշումները»։

Էլ ո՞ւր մնացին այն միւս առարկութիւնները, որոնք ահագին լեռնային շղթաներ և անանցանելի դժուարութիւններ էին բուսցրել կենտրօնական ժողովի գործունէութեան առաջ։

Եթէ առաջիկայ ժողովը, նոյնիսկ ըստ կ. վ.-ի, կարող է աներկբայելի դրական գործունէութիւն ունենալ և արդիւնաւոր հետևանքներ առաջացնել, այլևս ինչ նշանակութիւն ունի այն խնդրագիրը, որը նախ 14 հոգևորականների, իսկ այժմ միայն մի քանի վաւեր ստորագրութիւններով մատուցվել է Կաթողիկոսին։

VII

Կարապետ վարդապետը դնում է մի քանի սուր և յուզիչ հարցեր և յայտնում իր կասկածը և անվստահութիւնը առաջիկայ ժողովի խելահասութեան, քաղաքագիտութեան և կոռեկտութեան վերաբերութեամբ և կարծում է, որ եթէ հոգևորականներ ներկայ լինէին ի պաշտօնէ, ամէն ինչ լաւ կերթար։

Ահա նրա խօսքերը՝

Արդեօք կանոնադրութիւնը կը հաստատվի՞ և առանց մէկին հարցնելու անմիջապէս գործադրութեան մէջ կը մտնէ՞. հոգևորականութեան գլուխ Կաթողիկոսի ձեռքը կը տա՞ն, որ հաստատէ և հաստատել տայ, թէ՞ նրան էլ կասեն. մեզ ժողովի հրաւիրեցիր, գործդ դրանով վերջացաւ, մի կողմ կանգնիր այժմ. մենք կը կառավարենք մեր դպրոցներն, ինչպէս մեր սիրտն ուզում է...

Կամ թէ՝

Ոմանք հարց են դրել, օրինակ, որ առաջնորդական ու փոխանորդական պաշտօնների համար կարելի է անխտիր աշխարհականների և քահանաների ընտրել։

Կարո՞ղ է արդեօք ռուսահայոց մասնաւոր, թէկուզ «կարգադրիչ և տնօրէն» ժողովը այդպիսի հարց վճռել։ Կարո՞ղ է վճռել, թէ ինչպէս պէտք է աշխարհականին կամ քահանային ձեռնադրեն ու համապատասխան աստիճանը տան, թէ ինչ պէտք է անեն ամուսնուն և զաւակներին, եթէ նա ամուսնացած է։

Անկասկած՝ կարելի է շարել այսպիսի բազմաթիւ հարցեր։ Սակայն դա մի՞թէ օգտաւէտ կը լինի. Ի հարկէ, ոչ։

VIII

Դեռ նախկին յօդուածների շարքում կ. վ.-ն առաջ էր բերել մի լուր, որ նա լսել է Ալէքսանդրապօլում այն բանի մասին, թէ կենտրօնական ժողովը պէտք է կրճատէ պատարագը, և հարց էր տուել, թէ մի՞թէ աշխարհականների ժողովը պէտք է անէ այդ կրճատումը։

Մենք պատասխանեցինք այն ժամանակ։ Եւ, կարծում ենք, ոչ մի կարևորութիւն չը կար նորից այնպիսի հարցեր դնել ընթերցողի առաջ, որոնք կրում են կրօնական բնաւորութիւն։ Մենք ասել ենք և դարձեալ ասում ենք, թէ շատ պարզ է, որ ամէն մի հարց, որ կրօնական է իր բնաւորութեամբ, կը քննվի և կը լուծվի կրօնականների խորհրդակցութիւնների միջոցով։

Ենթադրենք մի րոպէ, որ կենտրօնական ժողովը կազմված է այնպէս, ինչպէս ծրագրել էր դեռ Մատթէոս վարդապետը, այսինքն 60 պատգամաւորից 40-ը աշխարհական են, իսկ 20-ը հոգևորական, և դիցուք այդպիսի մի ժողովում յարուցվում են կ. վ.-ի յիշատակած հարցերը։ Մի՞թէ այն պատճառով, որ ժողովը մի այդպիսի կազմ ունի, նրա որոշումները կը գոհացնեն կ. վ.-ին, ինչ ձևակերպութիւն էլ ստանալու լինեն։

Անկասկած, ոչ։

IX

Նոյն տեսակ բնաւորութիւն են կրում և կ. վ.-ի այն տողերը, որոնք վերաբերում են եկեղեցական և դպրոցական կալուածներին։

Կ. վ.-ն ասում է, թէ ժողովրդական ներկայացուցիչները պէտք է խլեն կալուածները հոգևորականութիւնից։

Խլե՞ն։ Դա ինչ խօսք է։ Ինչպէ՞ս թէ խլեն։ Ժողովուրդը ինչպէ՞ս կարող է ինքը իրանից խլել մի բան։

Եթէ այդպէս շարունակէք դատել, վաղը կարող էք ասել, որ ժողովուրդը խլել է իր բոլոր հիմնարկութիւնները, իր ընկերութիւնները, իր գրականութիւնը, իր դպրոցները, իր եկեղեցին։

Ահա այդ ձևերն են, դատողութեան այդ եղանակներն են, որ [illegible] են աշխարհականների մէջ անվստահութիւն դէպի հոգևորականութեան այս ու այն ներկայացուցիչը։

Դրանք այնպիսի ձևեր են, որոնք նպատակ ունեն ամբոխի վրա տպաւորութիւն գործելու, բայց լաւ ձևեր չեն։

Եւ, բացի այդ, նրանք ամէն անգամ միատեսակ չեն ընդունվում ամբոխի կողմից։

Տանք գիտակցութիւն, եթէ կարող ենք։

Իսկ վախեցնել փխրուն սպառնալիքներով նոյն իսկ նպատակայարմար չէ։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կիրակի, յուլիսի 23-ին, Թիֆլիսի հեռագրական հաղորդակցութիւնը Շուշու հետ վերսկսվեց։

Շուշի, 23 յուլիսի

Այստեղի հայ-թուրքական խորհրդակցութեան հայ անդամները երեք անգամ դիմում արին թուրքերին հաշտութիւն կայացնելու, բայց թուրքերը չը ցանկացան դրական պատասխան տալ և յետաձգել են հաշտութեան գործը։

Ճիշտ է, առ այժմ խաղաղ է, բայց թուրքերի հաշտութիւն չը կայացնելը յուզում է մտքերը։

Այստեղի խորհրդակցութեան հայ անդամները դիմեցին Բագու և ցանկութիւն յայտնեցին, որ այնտեղից Շուշի գնան թուրք ներկայացուցիչներ նպաստելու հաշտութիւն կայացնելուն։

Շուշի, 24 յուլիսի

Իշխան Ամիլախվարին հասաւ Շուշի։

Թիֆլիսից գնացած զօրքը հասել է տեղ և իջևանել է Խանքենդ աւանում։

Ուրբաթ գիշերվայ հրացանաձգութիւնից վիրաւորվածները շատ չեն։

Գեներալ Գոլօշչապօվը հրամայել է հեռանալ ռազմական դիրքերից թէ թուրքերին և թէ հայերին։ Այն տունը, որտեղից թուրքերը հրացաններ են խփել դէպի զօրքը, այժմ գրաւված է զօրքերով։

Այստեղ լուր հասաւ, որ Սոս գիւղի վրա յարձակվել են թուրքեր մի քանի հարիւր հոգով, բայց յետ են մղվել։ Մանրամասնութիւններ դեռ չը կան։

Վաղարշապատ, յուլիսի 20-ին.

Թալին գիւղը զուտ հայաբնակ գիւղ է և գտնվում է Արագածի լանջում։

Անցեալ շաբաթ Թալինցի վեց հայ ձիերով գնալիս են լինում Սարդարապատ՝ եմիշ, ձմերուկ առնելու և Թալինում ծախելու նպատակով։ Երբ հասնում են Ղարաբուրունի և Սարդարապատի պահականոցների մէջ եղած ամայի տարածութեանը (այդ պահականոցները մէկ մէկուց հեռու են մօտաւորապէս 20—22 վերստ) դրանց առաջ դուրս են գալիս 10 զինված թուրքեր և աշխատում են շրջապատել և բոլորին բռնել։ Երեք հոգու բռնում ու սպանում են գազանաբար և տանում են թէ ձիերը և թէ նրանց եղած չեղածը, իսկ երեքին մի կերպ աջողվում է փախչել և իմաց տալ Վաղարշապատի գաւառապետին, նաև Երևանի նահանգապետին։ Գաւառապետը իր կողմից անմիջապէս ուղարկում է դէպքի տեղը իր օգնական Ալիխօվսկուն, իսկ նահանգապետը իսկոյն և եթ գնացքով գիշերը գնում է Ղարաբուրուն կայարանը, որտեղից անցնում է համանուն պօստը, որտեղ գտնում է Էջմիածնի գաւառապետի օգնականին։ Նահանգապետը պատուիրում է Ալիխօվսկուն մնալ այնտեղ մինչև բոլոր յանցաւորներին բռնելը։

Ալիխօվսկին ութ օր աւազակներին հետամուտ լինելուց յետոյ վերջապէս աջողեցնում է բռնել աւազակներից 6-ին, իսկ 4-ը և թալանված ձիերը մինչև օրս չեն գտնված։

Ամսիս 20-ին, երեկոյեան ժամը 8-ին, ստրաժնիկներով շրջապատված բերին Վաղարշապատ 6 աւազակներին, որոնք, ինչպէս ասում են, Էշնակ և Ներքին Աղջաղալա կոչված թուրքաբնակ գիւղերից են եղել։ Այդ գիւղերի սահմանների մօտ Ղարաբուրուն տանող ճանապարհի վրա է կատարվել վերոյիշեալ գազանութիւնը։

Գ. Աղաջանեան

Երևան, 19 յուլիսի

Ամսիս 16-ին, երեկոյեան ժամը մօտ 10 ին, տեղումս պատահեց հետևեալը։ Աստաֆեան փողոցի ոստիկանատնից մի քանի քայլ հեռու, մի խանութպան իր օրվայ դրամարկղը դրած սեղանի վրա հաշուելիս է լինում, երբ ներս է մտնում խանութ մի անծանօթ երիտասարդ և ծխախոտ ուզում։ Խանութպանի հարցին, թէ ծխախոտը ո՞ր տեսակից է ցանկանում, անծանօթը հանելով ատրճանակը ուղղում է խանութպանի կրծքին, իսկ ձախ ձեռքով վերցնում է սեղանի վրայի փողերից։ Խանութպանը իրան չը կորցնելով իսկոյն բռնում է անծանօթի ձեռքը և աշխատում է խլել վերցրած փողերը։ Բայց անծանօթը կրկին ատրճանակը ուղղում է խանութպանի վրա։ Խանութպանը աւելի ճարպիկ գտնվելով՝ մտնում է սեղանի տակը և միևնոյն ժամանակ հանելով իր ատրճանակը՝ բարձրացնում է հակառակորդին խփելու համար։ Չարագործը մի կերպ խլելով իր ձեռքը փողոց է ընկնում ու փախչում։ Խանութպանը օգնութիւն աղաղակելով ընկնում է նրա յետևից։ Վերջապէս խանութպանին աջողվում է ոստիկանութեան օգնութեամբ բռնել չարագործին ու տալ արդարադատութեան ձեռքը։ Չարագործը նոր-բայազէտցի Լևոն Խաչիկեանցն է եղել։

Գ. Աղաջանեանց

Բալախանի, 21 յուլիսի

Մեզ մօտ ընտրութիւններ եղան. ժողովուրդը համոզված էր, որ ինչպէս գրում են թերթիկները՝ այնպէս էլ պիտի արկղը գցել. բացատրութեան ոչ մի խօսք. առաջադրած թեկնածուները «բաբեկինսկ» կարգադրիչներ են, որոնց վրա կարելի է վստահանալ. ձեռնպահ մնացին մի քանիսը...

Ա. Զ.

Հաստատ աղբիւրից մեզ հաղորդում են, որ Պարսկաստանի արտաքին գործերի մինիստր Մուշիր-ուդ-Դովլէն նշանակվել է սադրազամ, պահելով միևնոյն [illegible] են փոփոխութիւններ դեսպանական պաշտօններում։ Պետերբուրգի դեսպանը, որ նոր սադրազամի որդին է, արդէն Թեհրան է եկել. շուտով սպասվում է նաև Վիեննայի դեսպանը։

Կիրակի, յուլիսի 23-ին, պարսից ընդհանուր հիւպատոսարանը տօնեց Իրանի ինքնակալ Մուզաֆֆեր-Էդդին Շահի ծննդեան տարեդարձը։ Բազմաթիւ շնորհաւորողների թւում ընդհանուր հիւպատոսին ներկայացան և պարսկահպատակ հայերը, որոնց հիւպատոսը ընդունեց սիրալիր կերպով։ Սալմաստեցի հայ աշխատաւոր մի խումբ, առանձին ներկայանալով, ներկայացրեց, ըստ պարսկական սովորութեան, խմորեղէն-քաղցրաւենիք, շքեղ կերպով պատրաստված, հետևեալ մակագրութեամբ. «Զինդա-բադ Շահնշահը Իրան, Մուբարեք-Բայրամը Զուլուսի Հիմայունի» (Կեցցէ Իրանի Շահնշահը. շնորհաւոր լինի նորին մեծութեան տօնը). իսկ մի այլ տեղ մակագրված էր «Սալմաստի աշխատաւոր (քեասիբ) հայերից»։ Հայերը յանձնեցին հիւպատոսին հետևեալ հեռագիրը յանուն Շահի.

«Նորին Մեծութիւն, Շահնշահին Իրանի.

«Ներկայանալով ընդհանուր հիւպատոսին, խնդրեցինք արկանել Ձեր գահի պատուանդանին Ձեր հաւատարիմ, անձնուէր հպատակների շնորհաւորութիւնները Ձեր Կայսերական Մեծութեան ծննդեան առիթով։ Ուղարկեցինք Աստուծուն ջերմ աղօթքներ Ձեր Մեծութեան, պարսկահայերի գթած հովանաւորի թանկագին կեանքի երկարութեան համար»։

Սալմաստի աշխատաւոր հայ ժողովրդի ներկայացուցիչներ։

Կիրակի օրը, յուլիսի 23-ին, Մուզաֆֆէր-Էդդին Շահի ծննդեան տարեդարձի առիթով պարսկական ընդհանուր հիւպատոսը՝ ամբողջ օրը շնորհաւորական այցելութիւններ ընդունելուց յետոյ՝ երեկոյեան համար մի շքեղ րաուտ էր կազմել, որին հրաւիրված էին Թիֆլիսի նահանգապետն և բարօն ֆօն Ռաուշ, գեներալ Կախանօվսկի, ֆրանսիական, գերմանական և աւստրիական հիւպատոսները, պարսկական պրինց Շահ-Ռուհ-Միրզա, վրացի իշխանուհիներ և այլն. հայերից հրաւիրված էր պ. Ա. Սարուխան։ Երեկոյթն անցաւ շատ ուրախ։ Նուագում էր թէ զինուորական եւրոպական և թէ պարսկական երաժշտութիւնը։ Տանտէրը՝ միրզա Մահմուդ-խան Մուֆախամ-ուս-սուլթան շատ սիրալիր էր բոլոր հիւրերի հետ։

Դերբենդ, յուլիսի 21-ին։

Դերբենդից 20 վերստ հեռաւորութեան վրա գտնվում է «Դարվագ» կոչված գիւղը, որի բնակիչները զուտ լեզգիներ են։ Սրանից 7 օր առաջ այդ գիւղում պատահեց հետևեալ դէպքը։ Մի տարի առաջ սպանվում է նոյն գիւղի բնակիչներից մէկը, իսկ սպանվածի բարեկամները, սպասելով յարմար ժամանակի, կամենում են վրէժ լուծել սպանողից։ Ինչպէս գիւղումը սովորութիւն է, առաւօտեան հաւաքվում են գիւղացիք մզկիթի առաջ ու առօրեայ գործերից խօսում։ Ահա այդպիսի օրերից մէկն էր, և ի իրար են պատահում սպանվածի եղբայրը ու սպանողը, ու բռնկվում է մի անսովոր և կատաղի պատերազմ. երկու հանդիպողները սկսում են իրար հասցնել սրերի հարուածներ. ոտքի է կանգնում ամբողջ գիւղը, և, կարող էք երևակայել, փոխանակ բաժանելու երկու կռւողներին, սկսում են երկու կողմերը իրար օգնութեան գալ, և, ամբողջ մի մի ժամ կռւելուց յետոյ, ընկնում են երկու կողմից 6 հոգի սպանվածներ, 24 մարդ վիրաւորներ, որոնց թւումն էին 3 կին։ Ինչպէս երևում է, այդ խմորը դեռ շատ ջուր կը տանի։

Դարգիման

Շաբաթ օր, յուլիսի 22-ին Թիֆլիսի պօստը, որ գնում էր դէպի Սղնախ, կողոպտվել է Կօչրիտ և Կակաբետ կայարանների միջև։ Պօստի վրա յարձակվել են մի քանի տասնեակ հոգի, սպանել են պօստատարին, մի ստրաժնիկի, վիրաւորել են երկու ստրաժնիկի և տարել են մօտ 4000 րուբլու գումար։

Դերբենդ, 19 յուլիսի.

Դէշլագարում, ուր ապրում է մշտապէս զինւորների մի վաշտ, ամսիս 17-ին, Դումայի փակման և մի քանի այլ պատճառներով, զինւորները յեղափոխական երգեր երգելով շրջում են փողոցները, ապա պահանջում են իրանց գնդի դրօշակը. հրամանատարը չէ տալիս. զինւորները ուղարկում են քահանային. սա սկսում է համոզել հրամանատարին, որ տայ։ Վերջինս՝ հանելով ատրճանակը՝ սպանում է քահանային, ասելով որ դու էլ սպասում ես ապստամբներին։ Զինւորները, այս տեսնելով, գալով սպանում են հրամանատարին։ Սպաները սկսում են ատրճանակներ արձակել. զինւորները կա- և 5-ին վիրաւորում։ Այժմ [illegible] դին և զինարաններին։ Ուղարկվում են ամէն տեղից զինւորներ և կազակներ պատժելու։

Արշակ Թադէոսեան

Բէշիշքէնդ (Վայոց Ձոր), 15 յուլիսի.—Վերջերս տեղի ունեցող անընդհատ սպանութիւններն ու կողոպուտները նորից լուրջ կերպով վրդովում են առանց այն էլ քայքայված ժողովրդի հանգստութիւնը, ու նորից էլի գալիք արիւնոտ օրերի պատկերը գիւղացուն սպառնում է։ Ամէն օր մի նոր սպանութիւն է պատահում, մի նոր կողոպուտ։

Մի շաբաթ սրանից առաջ Ալայազի ձորի բոլոր աւազակները յարձակվում են Նոր-Բայազէտի Բեօլաղաշ հայ գիւղի օթաների վրա։ Օթայում եղած տղամարդիկ քաջութեամբ դիմադրում են և յետ մղում յարձակումը. թուրքերը նահանջելիս կրակի են բռնվում նաև Գեօզալդարի օթայից։ Երբ թուրքերը քաշվում ու հեռանում են հայերի օթայից, քեօլաղաշցի մի խումբ երիտասարդներ հալածում են նրանց և բաւական հեռանում իրանց օթաներից։ Այդ ժամանակ մառախուղ է բարձրանում և հայ երիտասարդներից երկուսը, Յովհաննէս և Գրիգոր, բաժանվելով իրանց ընկերներից և կորցնելով նրանց, ընկնում են թուրքերի արանքը, որոնք բռնելով նրանց սոսկալի տանջանքներով սպանում են։ Գալիս է Նոր-Բայազէտի պրիստաւը, ապա և գաւառապետի օգնականը. թուրքերը երկուսին էլ բռնում են գնդակի (այդ ոչինչ, որովհետև պաշտօնեաները անպատճառ կը պատճառաբանեն, թէ թուրքերը մեզ ծպտեալ հայերի տեղ են դրել), և նրանց նահանջելով երեկոյեան գալիս են Քարագլուխ հայ գիւղը։ Այս կողմից գնում է գաւառապետի օգնական Սկիբինսկին էլ, ի հարկէ, զօրով զօրքով, և մի քանի օր իրանց քաջամարտիկ կօզակներով էս կողմ էն կողմ են քաշ գալիս՝ ապա ցրվում, սպասելով կարգադրութեան գեներալ-նահանգապետի կողմից։ Թուրքերը, ինչպէս պատմում են, կորուստ չեն ունեցել։ Դիակները ստացվել են թուրքերից և յանձնվել տէրերին։ Փառք Աստուծոյ, որ կառավարութիւնը այդքանն էլ արել է։

Ամսիս 13-ին Բեօթանլու թուրքաբնակ և Հէրհէր խառը գիւղերի արանքում տեղի է ունենում հետևեալ դէպքը։ Ղուշչիբիլակի արծաթահանքը մշակող անգլիացիները Բէշիշքէնդից վերցնում են քրէնդարներ, իրանց ապրանքը Ղուշչիբիլակ հասցնելու համար. հայ վարձկաններից մէկն էլ լինում է աղքատ ու համարեա կոյր Ներսէս Խաչատրեանը, որին Բեօթանլու գիւղի մօտ յետ են թողնում ընկերները և իրանք բաւական առաջից են գնալիս լինում։ Ներսէսը անյայտանում է, ու միայն երեկոյեան դէմ հէրհէրցիները իրանց քեաշւանում գտնում են նրա դիակը, սարսափելի այլանդակված. մորթված է մանգաղով։ Ամենայն հաւանականութեամբ սպանել են բեօթանլուցիք և գցել հէրհէրցիների հանդը։

Այսօր գնացին կօզակներ պրիստաւի հետ, իսկ Ալայազի ձորից այն կողմ պիտի գայ այժմ թուրք գիւղերում հիւրասիրվող Սկիբինսկին։ Ամենախիստ միջոցը, որ ձեռք կառնվի, հաւանական է, կը լինի մի քանի տների կողոպուտ, մի քանի կանանց բռնաբարում, իսկ արիւնը էլի կը շարունակվի հոսել, ոճիրն էլի կը մնայ գիւղացու վրա ծանրացած։ Պրիստաւը, շնորհիւ իր կոպտութեան ու ծոյլ բնաւորութեան, վայելում է ժողովրդի ատելութիւնը, մինչդեռ նոր գաւառապետը իր անկողմնապահ և խելօք վարմունքով համակրանք և հաւատ է ներշնչում գիւղացիներին։ Բայց ինչպէս յոյս ունենայ խաղաղութեան վրա ժողովուրդը, երբ վերջին յոյսը՝ Դուման էլ քանդվեց, ու յեղափոխութիւնը պիտի նորից որոտայ մեծ Ռուսաստանում, որի մէջ մենք մասնակցութիւն ունենալու հնարաւորութիւնից էլ զուրկ ենք։

Գեղջուկ

ԹԵՀՐԱՆԻՑ մեզ գրում են.—Չը նայելով որ վերջին օրերս Պարսկաստանի Մուզաֆֆէր-Էդդին Շահնշահը ընդունեց աթաբէգի հրաժարականը և որոշ չափով բաւարարութիւն տուեց մայրաքաղաքի յեղափոխական ժողովրդի գլխաւոր պահանջներից մէկին, սակայն ժողովրդական յուզմունքները դեռ ևս վերջացած չէ կարելի համարել։ Վերջին օրերս Թեհրանի անգլիական դեսպանատանը «բաստ» նստողների թիւը հետզհետէ մեծանում է։ Հաստատ աղբիւրից կարող ենք հաղորդել, որ այսօր, յուլիսի 15-ին, դրանց թիւը հասել է մօտ 5000-ի, որոնք շարունակում են յամառել իրանց պահանջների վերաբերմամբ և իրանց պատգամաւորների բերանով նոյն իսկ խիստ սպառնալիքներ են կարդում պարսից կառավարութեան հասցէին։ Այդ «բաստ» նստողները պետութիւնից պահանջում են յետ կանչել մայրաքաղաքից հեռացած գլխաւոր հոգևորականներին և նրանց որոշ բաւարարութիւն տալ։

Դեսպանատանը ապաստանած պարսիկների մէջ կան բաւական ախունդներ, վաճառականներ, արհեստաւորներ և ուրիշ մարդիկ, որոնք աղերսում են անգլիական դեսպանատան միջնորդութիւնը իբրև հաշտարար միջնորդի։ Անգլիական դեսպանատունն էլ իր կողմից ամէն տեսակ միջոցներ է գործ դնում, որպէս [illegible] կառավարութեան միջև։ Բայց, չը նայելով այդ հանգամանքին, կառավարութիւնը մի տեսակ անտարբերութիւն է ցոյց տալիս «բաստ» նստող պարսիկների նկատմամբ, երևի կարծելով որ դրանցից այլ ևս լուրջ վտանգ անսպասելի է, որովհետև դրանց պարագլուխ հոգևորականները արդէն հեռացել են մայրաքաղաքից։

«Բաստ» նստող պարսիկներից մի քանիսը մասնաւոր մարդկանց պատմել են, որ իրանք սկզբում ցանկացել են ապաստանել Թեհրանի Թիւրքաց դեսպանատանը, սակայն Թիւրքական դեսպանը նրանց մերժել և չէ ընդունել իր հովանաւորութեան ներքոյ։ Այդ բանից վիրաւորված, բողոքող պարսիկները իբր թէ մի հեռագրով հաղորդել են Թիւրքիայի սուլթանին, որ նրա դեսպանը իրանց հետ շատ տգեղ է վարվել, երբ իրանք ցանկութիւն են յայտնել ապաստանելու նրա հովանաւորութեան ներքոյ։ Սուլթանը պաշտօնապէս բացատրութիւն է պահանջել իր դեսպանից և այդ առթիւ յայտնել է իր դժգոհութիւնը։ Այժմ լուրեր են պտտում այստեղ, իբր թէ Թիւրքական ներկայ դեսպանը շուտով պէտք է թողնի իր պաշտօնը, և նրան պէտք է փոխարինի մի նոր դեսպան։

Աւելորդ չեմ համարում յայտնել և այն, որ տեղիս ռուսաց դեսպանը սկզբում յայտնել է, որ ինքը պատրաստ է նրանց հովանաւորելու, եթէ բողոքող պարսիկները մտնեն նրա հովանու տակ. սակայն պարսիկները չեն ընդունել ռուսաց դեսպանի առաջարկութիւնը։

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Կիրակի, յուլիսի 24-ին, Թիֆլիսի մի քանի եկեղեցիներում տեղի ունեցան ընտրութիւններ։ Քամոյեանց եկեղեցում պատուիրակներ ընտրվեցին Աւ. Սահակեան և Ս. Զաւարեան. Մէյդանի ս. Գէորգ եկեղեցում—Յ. Ամիրխանեան, Ա. Աբէլեան և Յ. Թադէոսեան. Նորաշէնի եկեղեցում—Ստ. Մնացականեան. Բեթղեհէմի եկեղեցում—տիկին Եղիազարեան. Թանդոյեան եկեղեցում—Ա. Մհրաբեան, Մարտիրոս Սիմոնեան և Յովհաննէս Յովսէփեան։ Վանքի, Մուղնու, Ջգրաշէնի, ս. Նշանի եկեղեցիներում ընտրութիւններ չեն կայացել։

Դեռ ևս տեղեկութիւն չունենք Կարսի ընտրութիւնների հետևանքների մասին։ Սակայն երեկ, յուլիսի 24-ին, Կարսից հարցրել էին Լ. Սարգսեանին հեռագրով, թէ արդեօք համաձայն է նա ընդունել պատգամաւորութիւն Կարսի կողմից Էջմիածնում։

Աստրախան, յուլիսի 14-ին

Ամսիս 12-ին, սեմինարիայի նոր շէնքում նշանակված էր ծխականների ժողով, որի պարագլուխներն էին պատուիրակների ընտրութիւնը և սեմինարիայի բացման խնդիրը։ Երկսեռ ժողովրդականների թիւը 300-ի էր հասնում, որը մեզանում մի չը տեսնված երևոյթ էր։ Նախագահում էր Յ. Մեղնիկեան։ Կաթողիկոսի կոնդակը [illegible] կարդալուց յետոյ, Նախագահը բացատրեց խնդրի կարևորութիւնը։ Որոշվեց խուզոյն մի հայերէն հեռագրով ողջունել Կաթողիկոսի մեծ քայլը ժողովրդի իրաւունքների վերականգնման գործում։ Այնուհետև հարց բարձրացաւ—քանի՞ պատուիրակ ընտրել։ Ժողովականներից մէկը, հիմնվելով վիճակագրական տեղեկութիւնների վրա, առաջարկում էր ընտրել 5—6 անձ։ Ժողովը, հիմնվելով քահանաների տուած ցուցակների վրա, որոշեց ընտրել 4 պատուիրակ։

Տամակներով ձայների մեծամասնութիւն ստացան Յ. Մեղրիկեան, Գ. քահ. Մկրտումեան, Ա. Լևխանեան, բժ. Ցագրինցեան։ Բացի վերոյիշեալներից քուէարկութեան ժամանակ ունեցան ևս երկուսը՝ Կ. Ալաջեան և Կ. Սօրոլեան։ Պատուիրակներ ընտրվեցին առաջին չորսը։ Ընտրվածները երիտասարդութեան թեկնածուներն էին, չընտրվածները—հաստ գրպանաւորներինը։ Վերջին բաների վրա նրա համար եմ շեշտում, որովհետև երկու կողմն էլ պատրաստվում էին, նախապատրաստական ժողովներ էին գումարում և չարաչար աշխատում էին իւրաքանչիւրն իրանց թեկնածուներին անցկացնել և այս անգամ ևս դարձեալ երիտասարդութեան աջողվեց յաղթանակել գրպանաւորներին ու ապաներին, որոնք հովանաւոր են ամեն մի նորութեան, թարմ հոսանքի և գիտամտք արգելքներ են յարուցանում նոր երիտասարդութեան դէմ։ Երիտասարդութեան այդ յաղթանակը և ապաների ամօթանքը պարտութիւնը ընդունվեց երկար ծափահարութիւններով։

Ժամանակի ուշ լինելու պատճառով նախագահը յայտարարեց, որ սեմինարիայի բացման խնդիրը մնում է հետևեալ ժողովում որոշել, և յորդորեց բոլորին անպատճառ ներկայ լինել այդ ժողովին, որովհետև, բացի սեմինարիայի առաջնակարգ խնդրից, կայ և մի այլ կարևոր խնդիր—այդ Աստրախանի ժողովրդական դպրոցների վերատեսուչ Ամոսովի գրութիւնն է կօնսիստորիային ուղղած, որով չէ կամենում ընդունել ծխականների որոշումը տեղիս հայ օրիորդական դպրոցի վերաբերեալ։

Այդ խնդիրը կայանում է նրանում, որ մեր հասարակութեան մտածող մասը, տեսնելով որ ամեն տեղ հայոց դպրոցները վերադարձված են հոգևոր իշխանութեանը և միայն Աստրախանի օրիորդական դպրոցը մինչև օրս չէ դարձված, չը նայելով մի քանի դիմումներին. ուստի ծխականների ժողովը անցեալ յունիսի 14 ի նիստում որոշեց նախ՝ կարճել ուսումնարանին եկեղեցիներից տրվելիք 2600 ր. նպաստը, բ. վերջացած համարել նոյն ուսումնարանի համար ժամանակաւորապէս ընտրված տնտեսական յանձնաժողովի գործունէութիւնը, և Գ. քահ. Մկրտումեան, Յ. Մեղրիկեան, Գ. Սուլթանեան, Ա. Լևխանեան, տիկին Բ. և բժ. Ցագրինցեաններ, Ս. Գոնջումեան, և անձնափոխանորդներ՝ Մ. Տէր-Զաքարեան և Յ. Սոլովեան, որոնք 1905 թ. օգոստոսի 1 ի ուխտի զօրութեամբ պիտի բանան նոր հայ օրիորդական դպրոց Աստրախանում։

Անա այդ որոշումների դէմ է գնում վերատեսուչը, չը կամենալով ճանաչել թէ հոգևոր իշխանութեան իրաւունքներն և թէ ծխական [illegible]

Միւս կողմից էլ վերոյիշեալ տնտեսական յանձնաժողովն է ըմբոստացել և յանձին բժ. Ս. Պոպովի չէ կամենում կօնսիստորիային ստացած ուսումնարանական գումարները նոյն կօնսիստորիային վերադարձնել։ Մի խօսքով նոր հոգաբարձութեան առաջ յարուցվել են մի շարք դժուարութիւններ, որոնք աջող լուծում կը ստանան այն ժամանակ, երբ հասարակութիւնը իր գիտակից վերաբերմամբ ջանք չի խնայի օգնութեան հասնել նոր հոգաբարձութեան։

Բայց տեսնենք ինչ կը տայ հետևեալ, ամսիս 14-ի ժողովը։

Ժողովական

ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

—Յուլիսի 17-ին, երեկոյեան, Պետերբուրգում լուր է տարածվել, որ Վասիլեէվսկի կղզու վրա, Պիրօկաեինի գործարանից, գողացել են մի գնդացիր։ Մանրամասնութիւնները իմանալ անկարելի է եղել։

«Св. Жизнь»

—Լուր է պտտում, որ, ի նկատի առնելով Պրեօբրաժէնեան գնդի մէջ շարունակվող անկարգութիւնները, վճռված է աքսորից վերադարձնել գնդի առաջին բատալիօնը։

«Св. Жизнь»

—Պետերբուրգում բանակ դրած զօրամասերից շատերի մէջ ընդունված են «նորակոչ» զինուորներ։ Այդ նորակոչները, վերջացնելով իրանց ծառայութեան ժամանակամիջոցը, պահում են իրանց շատ կասկածելի կերպով և այն հարցերին, թէ այդ ինչ անսովոր զօրակոչ է կատարվում տարվայ կէսին, տալիս են բաւականին անհաւատալի և հակասական պատասխաններ, այսպէս օրինակ, որ նրանք 1905 թուի նորակոչներն են, ուղարկված էին Հիւսար Արեւելք, որտեղից նրանք եկել են վարժվելու զինուորական գիտութեան մէջ։

«Св. Жизнь»

—Պետերբուրգի գանձարանում ծառայողների թւի մէջ ընդունված են գաղտնի ոստիկանական բաժանմունքի մի քանի գործակալներ, որոնք հսկում են ոչ միայն երթևեկող հասարակութեան վրա, այլ և գանձարանի ծառայողների վրա։ Պաշտօնեաները այդ բանի դէմ զայրացած են։ Ագիտացիա է մղվում հասարակական պահանջ յայտնելու, որպէսզի հեռացնեն այդ ոստիկանական գործակալներին իրանց միջից։

—Մօտ օրերս Պետերհօֆ է գնացել գաղտնի ոստիկան. պաշտօնեայ Պետրօ և, հաւաքելով միասին բոլոր ոստիկաններին, մի ճառ է ասել ներկայ մոմենտի վերաբերեալ, որը վերջացրել է հետևեալ խօսքերով. «Ով ուզում է, թող հեռանայ, որովհետև մենք չենք կարող երաշխաւորել ոչ ոքի համար կեանքի ապահովութիւն»։ Գործակալներից մօտ 100 հոգի հրաժարական տուին ծառայութիւնից։ «Св. Ж.»

—Յուլիսի 17-ին Պետերբուրգի բանւորական շրջաններում բանւորական ժողովներ գումարելու փորձերը մեծ մասամբ անյաջող անցան, որովհետև քաղաքում շրջում էին կօզակների և դրագունների սաստկացրած պահակները, իսկ գործարանների մօտ նոյնպէս պահակներ էին նշանակված։ Բանւորական պատգամաւորների խորհուրդ կազմելու միտքը բանւորական շրջաններում դարձեալ սկսում է մեծ հեղինակութիւն ստանալ։ Մի քանի գործարաններում, որտեղ գերիշխում էր սօցիալ-յեղափոխականների ազդեցութիւնը, խորհրդի համար պատգամաւորներ արդէն ընտրված են, իսկ միւսներում պատգամաւորները ընտրված էին սօցիալ-դեմօկրատական կուսակցական պարլամենտական փրակցիայի կօնֆերենցիայի համար, բայց որովհետև Դումայի արձակումից յետոյ կօնֆերենցիան այլևս չի իրագործվի, այդ պատճառով որոշ հոսանք կայ նրա ընտրութիւններից օգտվել և բանւորական պատգամաւորների մի ընդհանուր անկուսակցական խորհուրդ կազմել։ Բանւորական շրջաններում տրամադրութիւնը բաւականին լարված է, բայց այժմ իրանց շատ զսպված են պահում, և մասնակի ընդհարումներ, երևի, չեն լինիլ։

ԳԱՆՁԱԿԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Յուլիսի 20-ին

Նախանցեալ շաբաթ մի խումբ քաղաքացիների ստորագրութեամբ մի հեռագիր ստացվեց Գանձակում, որով առաջարկում էին Գանձակի քաղաքացիներին միջնորդելու ուր հարկն է, որ կենտրոնական ժողովը յետաձգվի, ի նկատի ունենալով ներկայ խառն և անորոշ ժամանակը։

Գանձակեցիք թէև բագուեցիների առաջարկը թողեցին անհետևանք և միաձայնութեան ձեռնպահ մնացին, սակայն լրագիրներում յայտարարվեց իբրև լուր, որ իբր Գանձակը ևս բանակցել է համաժողովի յետաձգման մասին։

Երեկ երեկոյեան քաղաքիս «Զաիր-երի» կոչվող այգիներում բանող հայ և վրացի այգեպաններից վրա թուրքաց մասից 24 անգամ հրացան է արձակվել։ Հայերը այս մասին զանգատվեցին իշխանութեան։

Վաղը ուրբաթ է։ Երկոթուղու կայարանում բանող թուրք մշակները գործադուլ են արել։ Նրանց փոխարինում են ռուս զինուորները։

Ներկայումս մեզ մօտ հիւր է գտնվում յարգելի բժ. Զաւրեանը. անցեալ օրը քաղաքիս «Նիպօլօղիկ» այգում բազմաթիւ հանդիսականների ներկայութեամբ մի ռուսերէն դասախօսութիւն կարդաց, պատմելով իր տպաւորութիւնները Տաճկա-Հայաստանում։ Դասախօսին աջողվեց հետաքրքրելի դարձնել իր դասախօսութիւնը։

Բժ. Զաւրեանի գալու գլխաւոր նպատակն է թուրքերից և հայերից խառն մի բժշկական-սանիտարական շրջիկ մասնախումբ կազմակերպել թուրք և հայ գիւղերը շրջագայելու համար թէ բժշկական օգնութիւն հասցնելու և թէ հաշտութեան մասին բանակցելու համար։ Բժիշկը իր մտադրութեան և ցանկութեան մասին յայտնել է թուրք ուսանողներին և ինտելիգենցիային, որ աջակցեն իր այդ ձեռնարկութեանը։ Նրանք ամենայն սիրով ընդունեցին բժշկի առաջարկութիւնը, աջողութեան մասին կասկած յայտնելով, եթէ այդ միտքը չիրագործվի բէգերի և աղալարների համաձայնութեամբ։ Որպէս զի բէգերը, բուցանեն, որոշում են նրանց մասնակցութեամբ գործին ձեռնամուխ լինել։

Միանգամայն եռանդոտ և անսահման օպտիմիստ բժ. Զաւրեանը մի ժողով է հրաւիրում բէգերից և ինտելիգենտներից խառը քաղաքային վարչութեան դահլիճում։

Բժիշկը նախ խօսում է սանիտարական շրջիկ խմբերի մասին, որի համար թուրքերը կտրական յայտարարում են, որ իրանք չեն կարող երաշխաւորել ոչ թէ Զաւրեանի անձի մասին, այլ հէնց իրանց անձի մասին։

Հաշտութեան բանակցութեան և հաշտութիւնն իրագործելու համար բժ. Զաւրեանը մի նոր առաջարկութիւն է անում. երկու ազգերից խառն պահակներ կազմակերպել, որոնց գլխաւոր պարտականութիւնը պէտք է լինի յանցաւորներին գտնելու համար հոգալ։

Ալէքպէր-բէգ Ռաֆիբէկօվը, առաջարկութեան մտքի հետ համաձայն լինելով, պահակների ռոճկի հարցն է պատճառ բերում։ Բայց այդ պատճառաբանութիւնը հերքվում է նրանով, որ ներկայ պարագաներում երկու ազգերը հարիւր անգամ աւելի շատ են տուժում թէ բարոյապէս և թէ նիւթապէս, քան թէ պահակներին յատկացնելիք չնչին ռոճիկը։

Թուրքերը ասում են, որ հաշտութեան միակ գրաւականը այն կը լինի, որ իշխանութեան ձեռքը մատնեն դաշնակցականներին. հազար անգամ կրկնված առաջարկութիւն, որ արված է թէ տեղիս և թէ Թիֆլիսի համագումարներում։

Երեկ երեկոյեան բժ. Զաւրեանը մի փոքրամարդ ժողովում յայտնեց թուրքերից ստացած իր տպաւորութիւնը և առաջարկեց խառըն դասակարգից բաղկացած ներկայացուցիչներ ընտրել իրար հետ թէ հաշտութեան և թէ սանիտարական-բժշկական հարցերի մասին բանակցելու համար։ Ժողովականները միանգամայն համակրութեամբ վերաբերվելով բժշկի առաջարկութեանը՝ միաժամանակ աննպատակայարմար և աւելորդ ժամավաճառութիւն ու կիսատ միջոց համարեցին՝ այդ առաջարկութեան աջողութեան մասին կասկածանքներ առաջ բերելով ոչ թէ դէպի թուրք ժողովուրդը, այլ դէպի նրանց ղեկավար թուրք բէգերն ու աղալարները։

Սակայն բժ. Զաւրեանը, յոյսը չը կորցնելով, այսօր, հակառակ ուրիշի խորհուրդների, անցաւ թուրքաց թաղը այդ մասին թուրքերի հետ տեսակցելու։ Այս միանգամայն անմեղ բանակցութիւնից պրօվօկատորները բաւականին վաստակեցին։ Նրանք տարածել են ժողովրդի և, չը գիտենք որքան ուղիղ է, նաև զօրքի շրջանում, «թէ հայերը Թիֆլիսից ագիտատոր են բերել հայերին և թուրքերին հաշտեցնելու և ռուսների վրա յարձակվելու համար»։

Այս անհամոթ լուրը կայծակի արագութեամբ տարածվեց հայ ժողովրդի բոլոր խաւերում, և նրանք անհագին խմբերով հաւաքվեցին յաջորդարանի առաջ, դատապարտում էին բժշկի արած քայլը, սպառնում նրան և չէին ուզում այն հաշտութիւնը, երբ ռուս ժողովուրդը պէտք է այդ կարծիքն ունենայ և պիտի կորցնեն ռուսների համակրանքը...

Յաջորդին հազիւ հազ աջողվում է ծայրայեղ գրգռված ժողովրդի միտքը մի կերպով հանգստացնել և հաւատացնել, որ այդպիսի բան չը կայ, և այդ բոլորը մեր թշնամի պրօվօկատորների գործի արդիւնքն է։

Ալ. Սահակեան

† Մ. ԵԱ. ՀԵՐՑԵՆՇՏԷՅՆ

Հեռագիրները հաղորդեցին մի շատ ցաւալի լուր. Տերրիօկում յուլիսի 18-ին, դարանամուտ չարագործի գնդակով, սպանվել է Պետական Դումայի նախկին անդամ Հերցենշտէյնը։

Միխայիլ Եակօվլեվիչ Հերցենշտէյնը ծնվել է 1859 թւին։ Իր սկզբնական կրթութիւնը ստացել է գիմնազիայում և յետոյ, մտնելով Նովօրօսիյսկի համալսարանը 1881 թւին, աւարտել է նրա իրաւաբանական ֆակուլտետը, իսկ 1884 թւին ստացել է իրաւաբանական գիտութիւնների մագիստրոսութիւն։

1902 թւին նա հրատարակել է իր առաջին աշխատասիրութիւնը՝ «Կրեդիտ գիւղացիների և քաղաքների համար»։ Միաժամանակ նա աշխատակցել է «Русск. Мысль», «Русск. Вѣд.» և «Юрид. Вѣст.» թերթերին։

1903 թւին նա նշանակվեց Մօսկվայի համալսարանի պրիվատ-դոցենտ։

Իր մասնագիտութեան ու արտակարգ ընդունակութիւնների շնորհիւ նա ընդհանուր ուշադրութիւն է գրաւում և 1904 թւին ստանում է Մօսկվայի գիւղատնտեսական ինստիտուտում քաղաքատնտեսութեան և ստատիստիկայի պրօֆէսսօրի պաշտօնը։ Պրօֆէսսօրութեան պաշտօնում նա այնքան մեծ հեղինակութիւն է ստեղծում իր համար, որ 1905 թւին իր համաքաղաքացիները ընտրում են նրան Մօսկվայի քաղաքային դումայի ձայնաւոր, ուր ստանձնում է ֆինանսական մասնաժողովի նախագահի պաշտօնը։

Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը նոր ասպարէզ է ստեղծում Միխայիլ Եակօվլեվիչի համար և նա երիտասարդական աւիւնով անձնատուր է լինում ազատագրական շարժմանը, երկրի քաղաքական կեանքի մրրկված յորձանքներին, դառնալով ժողովրդական ազատութեան կուսակցութեան ամենաաքտիւ անդամներից մէկը։

Նա իր մասնագիտութեան մէջ, իր գիտական ասպարէզում անզուգական էր. և այդ պատճառով, երբ վրա հասաւ Պետական Դումայի ընտրութիւնները, Մօսկվայի ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը, գերադասեց Հերցենշտէյնին իշխ. պ. Դօլգօրուկովից։ Պետական Դումայում մենք արդէն տեսնում ենք նրան ժողովրդական ազատութեան փրակցիայի շարքերում։

Նրա ֆինանսական տաղանդն ու արժանաւորութիւնները Դումայում արժանաւոր գնահատութիւն ստացան։

Նրա մտածված ու լուրջ ճառերը, նրա պատասխանը ֆինանսների մինիստրին՝ բուռն ծափահարութեամբ ընդունվեցին։

Այդ պատճառով շատ բնական էր, երբ հարց ծագեց Դումայի մեծամասնութիւնից մինիստրական կաբինետ կազմելու մասին, ֆինանսների մինիստրի պորտֆելը որոշել էին անպատճառ տալ նրան։

Նրա մասնագիտական բազմաթիւ յօդուածներն ու աշխատասիրութիւններն են լոյս տե[illegible] «Ագրարական հարցը», «Հողի ազգայնացումը», «Գիւղացիական բանկը», «Բանւորների ապահովագրութիւնը Պետական հաշւով Գերմանիայում և այլն»։ Դուման արձակվեց... և Միխայիլ Եակօվլեվիչը զոհ գնաց «սպիտակ տերրօրի»։ Ռուսաստանը կորցրեց իր տաղանդաւոր ու եռանդուն պրօֆէսսօրներից մէկին, հէնց այն ժամանակ, երբ նրա ընդունակութիւնները և նրա գիտական պաշարը մեծ անհրաժեշտութիւն էին ներկայանում ժողովրդական մեծ դատի համար։

Մութ ոյժերը, դարանամուտ, ուղղեցին իրանց գնդակը մի մաքուր ու վեհ սրտի դէմ, որ բաբախում էր ժողովրդի ցաւերի համար։

Կորուստը շատ խոշոր է ու զգալի, բայց ազատագրվող ժողովուրդը ընդունակ կը լինի դուրս հանելու իր միջից նոր Հերցենշտէյններ։ Փառք ու պատիւ քեզ, աննուզական գործիչ, ժողովրդի ազատութեան զինուոր։

Յարգանք քո աճիւնին, քո անմոռաց յիշատակին։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՐԵՒԱՆԻՑ

Յուլիսի 21-ին

Ամսիս 12-ից յետոյ քաղաքում մի առանձին դէպք տեղի չէ ունեցել, սակայն յուզիչ լուրերը անպակաս են, և մեզ թւում է, թէ խաղաղութիւնը ապահովված չէ և գուցէ նոր ու սև ամպեր երևան մեր հորիզոնում... Շուշու և շրջակայքի դէպքերը ծանր ու ճնշող տպաւորութիւն են թողնում մեզ վրա։ Այս անգամ մութն է ու մութ։ Ձեր «ադմինիստրացիայի աչալուրջ հսկողութեան» ենթարկված մայրաքաղաքի (հեռուն չենք գնում) քաջագործութիւնները անհետևանք չեն մնում, նրանք ունենում են իրանց ժառանգները և ամեն տեղ և մեզ մօտ։ Քաջութեան ու պարծանքի դափնին հօ միմիայն ձեզ համար չէ պահված։ Օրինակներ՝ համեցէք։

Օրեր առաջ (12-ից յետոյ) «Россія» ընկերութեան գործակատարը, հետը ունենալով 2500 ր. երկաթուղու կայարանը գնալիս, ենթարկվում է յարձակման չարագործների կողմից, որոնք, հող ածելով նրա աչքերում, կապում են «մաֆթուլով», խլում գումարը ու անյայտանում։ Չարագործների ով լինելը անյայտ է։

Երկու օր չանցած մի ոմն ներս է մտնում մի խանութպանի մօտ այն ժամանակ, երբ նա համրելիս է լինում իր «գալլը» ու ծխախոտ խնդրում։ Մինչ խանութպանը ծխախոտ կը տար, անծանօթ հերոսը ատրճանակի սպառնալիքով լռեցնում է խանութպանին ու արծաթ փողերը խլելով դուրս է փախչում։ Ձայների վրա հաւաքվում ու դժուարութեամբ կարողանում են բռնել չարագործին և յանձնել ոստիկանութեանը։ Չարագործը հայ է ու Նոր-Բայազետի շրջականներից. արդարանում է իր հարբած լինելով։

Ամսիս 15-ին թուրքերը ատրճանակի գնդակով պօստ-հեռագրատան շինութեան հանդէպ գտնված փայտի պահեստ ունեցող Օհանեանի գործակատարին վիրաւորել են ոտից ու փախել։ Վիրաւորը հիւանդանոցումն է։

18-ին գիշերի մի քանի հարուածներով վիրաւորվել է մի հայ սափրիչ իր խանութպան ընկեր հայ կօշկակարից, ամենաչնչին պատճառներից դրդված։

Բայց խոշոր օրիգինալը հետևեալն է։

Երէկ, մօտ ժամը մէկին, երբ մեր սև քաղաքի մնացած փողոցները առանց այն էլ ամայի են դառնում, է որ շոգերի պատճառով, է որ երկիւղի, յանկարծ քաղաքի յայտնի փողոցներից մէկում (Նազարեան փողոց) ինչ-որ անսովոր աղմուկներ լսվեցին, և ապա, «փախչրէն», տարման հայի աղջկան»։ Փողոցի ծայրից գալիս էր մի սրարշաւ փակ կառք։ Շտապեցինք ու աշխատեցինք կանգնեցնել կառքը։ Կառապանը չուզեց լսել, ապա սրտված մեր սպառնալիքներից կանգնեց, և ինչ երկու թուրք իրանց մէջն էին առել մի 16—16 տարեկան գեղեցիկ թուրք աղջիկ և փախցնում էին...։

—Ինչու էք փախցնում այդ աղջկան,—հարցրի։

—Տեսնում էք, որ թուրք է, հօ հայ չէ, որ ուզում էք բռնել,—ասաց թուրքը։ Նա ունէր ձեռքում պատրաստ ատրճանակ։

—Լաւ, բայց ինչու էք փախցնում...։

—Սիրում ենք...։

—Թողէք մեզ գնալ. ձեզ հօ վնաս չենք տալիս, ասաց երերուն ձայնով թրքուհին. ես եմ գնում...։ Հասկանալի է որ «քաջ» թուրքերը իրանց նպատակին հասնելու համար ընտրել էին հայկական թաղն ու փողոցը։ Յետոյ պարզվեց, որ թրքուհին կուղ թաղեցն է եղել։

Տեսնում էք, ընթերցող, մեր հարևան թուրքերը չեն ցանկանում անգործ մնալ. եթէ ուրիշ անխառնելի գործեր չը կան, կարելի է աղջիկ փախցնել, մարդ գողանալ չէ՞ որ զբաղմունք է. ինչ անեն խեղճերը. առևտուր չը կայ, գործ չը կայ...

Ասում են մարդուս սիրտը ծովն է. նա ցանկութիւնների բազմատեսակ ու բազմագան երևէյներ ունի։ Այսօր անդառնալի կորուստ ունի՝ տխուր է վաղը ձոխ սեղան ու նուագածու կայ՝ ուրախ է. երկիւղ կայ՝ վախկոտ է, վերացաւ նա՝ համարձակ։ Կռիւներ կան՝ նափակ է. չը կայ՝ նա փողոցներումն է, և մենք քաղաքացիներս, որ անց ենք կացնում շատ աննորմալ ու դառնաղանկերպ կեանք, հէնց որ քիչ խաղաղութեան հոտ է փչում, բանտարկվածների նման դուրս ենք թափվում մի վայր գտնելու, գէթ մի փոքր սպառ շունչ քաշելու, եղած յուզիչ ու տխուր տպաւորութիւնները ցրելու, մարդ դառնալու։ Փորձում ենք խօսել, և անա թողի ու փոշու մի անագին սիւնացած շերտ բերանդ ու աչքերդ լցրեց, և դու թէ քոասցար և թէ պապանձվեցիր։ Թող է, թող որ կողմն էլ նայես, որ փողոցն էլ անցնես, թող իբ ամենարդարձակ իմաստով. գէթ քաղաքային վարչութիւնը, ի մխիթարութիւն մեր քաշած սև օրերի, անտես չանէր գոնէ քաղաքի բանուկ փողոցները ջրել, քանի որ դեռ երկիւղ չկայ, բունտ չկայ, թէ չէ, վաղը միւս օրը, Աստուած ողորմած է, մէկ էլ տեսար էլի սկսվեց, էլի ջարդեցին, էլի փախան. հօ այսպէս չի մնալու, դա արդէն մեր ճակատագիրն է, մեր հիւանդութիւնն է. դեռ շատ ժամանակ այսպէս կը մնանք։

Երևանում կենտրոնական ժողովի համար քաղաքային պատգամաւորների ընտրութեան արդիւնքը հետևեալն է։—Ս. Լուսաւորիչ եկե[illegible] Պօպօվ. Զօրավարում՝ ուսուցիչ Ս. Տէր-Գաբրիէլեանց. ս. Յովհաննիսում՝ Մ. Մուսինեանց և Ներսէս Ներսիսեանց. Պօղոս-Պետրոսում՝ Վ. Եղիազարեանց, Գ. Տէր-Խաչատուրեանց և իշխ. Արղութեան. Կաթողիկէում՝ Լ. Մուշեղեանց։ Ս. Սարգսի ընտրութիւնները, ասում են, յետաձգված են։

Էջմիածնում կայանալիք ժողովին մասնակցող պատգամաւորների ընտրութիւնը նշանակված է ամսիս 30-ին։

Ռ. Պօղոսեանց

ԱՄՆԻՍՏԻԱՅԻ ԼՈՒՐԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Ինչպէս այժմ պարզվում է, լիակատար կամ ընդհանուր ամնիստիա սպասել անտեղի է։ Աւելի հաւանական է թւում, որ լինի միայն մասնակի ամնիստիա, այն էլ այն պայմանով եթէ երկիրը խաղաղվի, հանդարտվի և տերրօրները այլ ևս չը լինեն։ Մեծ դժուարութիւն է պատճառում ագրարական անկարգութիւններին մասնակցող գիւղացիների հարցը։ Այդ հարցը քննվելու է կաբինետի մերձակայ նիստերից մէկում, իր կազմվելուց անմիջապէս յետոյ։

—Ստօլիպինի կարգադրութեամբ ներկայումս ներքին գործերի մինիստրութեան մէջ շտապով պատրաստվում են այն գիւղացիների ցուցակները, որոնք կալանաւորված են ագրարական յուզումներին մասնակցելու համար, դատաստանական քննութեամբ հաստատված փաստերը իւրաքանչիւրի հանդէպ նշանակելով։ Ինչպէս ասում են, այդ ցուցակները կազմվում են իւրաքանչիւր կալանաւորի յանցանքը որոշելու նպատակով, պարզելու թէ որին կարելի է արձակել բանտից։ Այժմ Շչեգլովիտովը զբաղված է ամնիստիայի նախագիծը կազմելով։ Սակայն, խօսում են, որ ամնիստիայի առաջարկութիւնը Պետերհօֆում անպասելի կերպով ընդդիմութեան հանդիպեց, բայց Ստօլիպինը պնդում է նրա անհրաժեշտութեան մասին, և նոյն իսկ ամնիստիան ընդունվելուց կամ մերժվելով է պայմանաւորում իր մնալը կամ հրաժարականը։ Նա կտրական կերպով յայտնել է, իբրև թէ՝ առանց ամնիստիա շնորհելու հնարաւորութիւն չը կայ նպատակայարմար աշխատանքներ սկսելու։ Դրա դէմ յայտնի չէ թէ ով է առաջ քաշել այն շարժառիթը, որ կոմս Վիտտէն գրանով է սկսել, բայց բացասական հետևանքներ ստացվեցին։ Ինչ վերաբերում է գիւղացիներին ամնիստիա շնորհելու հարցին, դա հէնց ինքը պրեմիէրն է համարում վտանգաւոր քայլ, ի նկատի առնելով այն հանգամանքը, որ ագրարական շարժումները հետզհետէ ընդարձակվում են, որոնց մասին ամենայն օր տեղեկութիւն է ստանում ներքին գործերի մինիստրութիւնը։ Այդ հողի վրա արդէն պալատական ինտրիգներ են պատրաստվում, որ, ի հարկէ, կը վերջանայ պրեմիէրի անկումով։

Ի՞ՆՉ ՏՈՒԵՑ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՆ

Պետական Դումայի գոյութիւնը դադարելուց յետոյ, իւրաքանչիւր հասարակական գործիչ և ամեն մի քաղաքացի, անշուշտ, պէտք է հարց տայ իրան, թէ ինչ արեց Դուման իր $2^1/_2$ ամսվա գոյութեան ընթացքում, ինչ տուեց նա Ռուսաստանին և ինչ արդիւնք ունեցաւ։

Որպէսզի այս հարցերին ճիշտ և որոշ պատասխան կարելի լինի տալ, անհրաժեշտ է իմանալ, թէ մեր այս առաջին Պետ. Դումայի վրա իբրև ինչ տեսակ մարմնի վրա էր նայում մարդ։ Ի հարկէ, նրանք, որոնք Դուման մի օրէնսդրական ժողով էին համարում, սաստիկ հիասթափված կը լինեն նրա ապարդիւն գործունէութիւնից, տեսնելով որ ամբողջ երկու և կէս ամսվայ ընթացքում նա կարողացաւ հազիւ մի հատիկ օրէնք մշակել ու վերջնական վախճանին հասցնել։ Այդ օրէնքն էլ, եթէ խստութեամբ նայելու լինենք, խակ օրէնք էլ չէ կարելի համարել։ Եւ յիրաւի, միթէ կարելի է օրէնք համարել այն որոշումը, որով մինիստրութեան տրամադրութեան տակ 15 միլիօն րուբլի դրվեց՝ սովեալ գիւղացիներին մի ամսվայ ընթացքում օժանդակութիւն հասցնելու համար։ Բայց իրապէս հէնց այդ միակ որոշումն էր, որ հաւանութիւն գտաւ և Պետական Խորհրդի կողմից ու Կայսրն էլ հաստատեց իր ստորագրութեամբ։ Իսկ մահվան պատիժը վերացնելու օրէնքը՝ որը նոյնպէս Դումայում վճռվեց, դեռ ևս ոչ Պետ. Խորհրդի ոչ էլ Կայսրի կողմից վերջնական վաւերացում չէր ստացել և, ուրեմն, հէնց այնպէս էլ անկատար մնաց։

Այսպէս, ուրեմն, իբրև օրէնսդիր ժողով, Պետ. Դումայի գործունէութիւնը միանգամայն ապարդիւն կարելի է համարել, և այն մարդիկ, որոնք Դումայի վրա նայում էին իբրև օրէնսդիր ժողովի վրա, կատարեալ իրաւունք ունեն սաստիկ հիասթափված լինելու։

Սակայն ամենամեծ հարցն էլ հէնց նրա մէջն է, թէ արդեօք կարելի՞ էր մեր առաջին Պետական Դուման, այն ձևի ու պայմանների տակ, ինչպէս նա ծնունդ առեց, օրէնսդիր ժողով համարել։ Օրէնսդիր ժողովները գոյութիւն ունեն միմիայն սահմանադրական երկրներում։ Բայց միթէ մենք սահմանադրութիւն ունենք։ Ի հարկէ, ոչ։ Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը մեզ մի քանի ազատութիւնների խոստումներ միայն տուեց, այլ ոչ թէ սահմանադրութիւն։

Սահմանադրութիւնը երբեք մանիֆեստով չէ տրվում, այլ նա մշակվում է ժողովրդի ներկայացուցիչներից կազմված սահմանադիր ժողովում, որը, յենվելով երկրի մէջ զարգացած և գոյութիւն ունեցող իրական ոյժերի յարաբերութիւնների վրա, սահմաններ է որոշում այդ ոյժերի իրաւունքների և պարտաւորութիւնների համար։ Սահմանադրութիւն մշակողների ամենաառաջին և գլխաւոր գործը լինելով կրճատել, սահմանափակել մինչև այդ ժամանակ տիրապետող և իշխող ռեժիմի ու նրա ներկայացուցիչների իրաւունքները, պարզ բան է, որ նրանք պէտք է և կարող են լինել միմիայն և միմիայն այդ ռեժիմի հակառակ կողմի մարդիկ, այլ ոչ թէ նոյն ռեժիմին պաշտպանողները, որոնք, բնական է, երբեք չեն ցանկանայ իրանց իրաւունքները կամովին սահմանափակել ու իրանք իրանց ձեռք արտօնութիւններից զրկել։

Արդ՝ երբ մշակվեց Ռուսաստանի սահմանադրութիւնը և ով մշակեց նրան, որպէսզի մենք իրաւունք ունենայինք հաւատալու, թէ Պետական Դուման օրէնսդիր ժողով պիտի լինի և երկրի համար ազատ կերպով օրէնքներ պիտի մշակի։ Այդպիսի սահմանադրութիւն չէր մշակված։ Հոկտեմբերի 17-ի մանիֆեստում, ի միջի այլոց, ասված էր, որ երբ ժողովրդային ներկայացուցիչների ժողով գումարվի, այդ ժողովը պէտք է և երկրի համար հիմնական օրէնքներ (սահմանադրութիւն) մշակի։ Բայց յետոյ, երբ բէակցիան նորից ուժեղացաւ, Վիտտէ-Դուրնօվօյի մինիստրութիւնը հէնց ինքը, չափազանց մեծ հեռատեսութեամբ, մշակեց quasi հիմնական օրէնքները և Դումայի բացման նախօրեակին հրատարակեց։

Թէ ինչ էին այդ հիմնական օրէնքները, դրա մասին քանիցս անգամ խօսել ենք արդէն իր ժամանակին։ Այնուամենայնիւ կարևոր է այստեղ յիշել, որ այդ օրէնքներն էլ իսկապէս որոշ իրաւունքներ սահմանափակելու համար էին մշակված եթէ կուզէք, այդ էլ մի տեսակ սահմանադրութիւն էր, միայն թէ իսկական սահմանադրութիւնից նա տարբերվում էր նրանով, որ այդ օրէնքներում սահմանափակվում, կաշկանդվում էին ոչ թէ հին ռեժիմն ու նրա ներկայացուցիչների իրաւունքները, այլ բացառապէս ժողովրդի և նրա ներկայացուցչական ժողովի իրաւունքներն ու գործունէութեան շրջանը։ Այդ quasi սահմանադրութիւնից դուրս է գալիս, որ ոչ թէ նոր ռեժիմն է հնին թելադրութիւններ անում ու նրա համար սահմաններ ստեղծում, այլ ճիշտ հակառակը՝ հինն է նորին դեռ հրամաններ արձակում։

Եւ այդ անոմալիան, այդ տարօրինակութիւնը ծագել էր պարզապէս այն հանգամանքից, որ հին ռեժիմի հիմքերը թէև արդէն խախտված էին, թէև ամբողջ երկիրը այն համոզման էր եկել, որ այլևս անհնարին է պետութեան գործերը այդ ռեժիմով կառավարել, բայց և այնպէս այդ ռեժիմը դեռ ևս բոլորովին տապալված չէր ու նրա ներկայացուցիչները դեռ ևս իրանց բաւականին զօրաւոր էին զգում, որպէսզի հարկ զգային նահանջելու։ Սրանք նահանջելու մասին բոլորովին չէին էլ մտածում, որովհետև դեռ ևս և ոչ մի պարտութիւն չէին կրել, ուստի նրանց ամենամեծ հոգսն այն եղաւ, որ իրանց խախտված դիրքերը ուղղեն և աւելի լաւ ամրացնեն նրանց։ Եւ հէնց դրա համար էր, որ նրանք Պետական Դումա ստեղծեցին, նախօրօք նրա գործունէութեան ու իրաւունքների շուրջը այն ամրապինդ պարիսպները քաշելով, որ կոչվում էին պետութեան հիմնական օրէնքներ։

Հին ռեժիմի ներկայացուցիչների կամ բիւրօկրատիայի հասկացողութեամբ, Պետական Դուման պարզապէս հրաւիրվում էր նրա համար, որ նա միայն և միայն ծառայէ բիւրօկրատիայի շահերին, որ նա ժողովրդի անունից սանկցիա տայ և վաւերացնէ հին ռեժիմի բոլոր ապօրինութիւնները, բոլոր խայտառակութիւնները։ Այդ եղանակով Պետական Դուման բիւրօկրատիայի համար մի տեսակ գործիք պիտի լինէր, մի կողմից՝ ժողովրդական խլրտումներն ու ազատագրական շարժումները հանգստացնելու համար, իսկ միւս կողմից, բիւրօկրատիային աւելի ոյժ տալու համար։ Ճիշտ է, նրան օրէնսդրական իրաւունքներ էր տրված, բայց, բիւրօկրատիայի հասկացողութեամբ ու ցանկութեամբ Պետական Դուման պիտի աշխատէր այնպիսի օրէնքներ մշակել, որոնք մազաչափ անգամ չը վնասէին ոչ բիւրօկրատիայի և ոչ էլ խոշոր հողատէր ազնուականների շահերին ու չը սահմանափակէին հին ռեժիմի անսահման գործունէութիւնը։

Անա այդ մտքով ու իմաստով նայում էր բիւրօկրատիան Պետական Դումային։

Ճիշտ այդ տեսակէտով էին նայում Պետական Դումայի վրա և աջակողմեան կուսակցութիւնների պատգամաւորները։ Եւ եթէ ամբողջ Դուման այդ կարգի պատգամաւորներից կազմված լինէր, այն ժամանակ նա, անշուշտ, իբրև օրէնսդիր մարմին, գուցէ շատ աւելի բեղմնաւոր աշխատութիւններ ունենար այս $2^1/_2$ ամսվան մէջ, քան իրապէս ունեցաւ, թէև նրա մշակած օրէնքները, վստահութեամբ կարելի է ասել, ոչ մի նշանակութիւն չէին կարող ունենալ ժողովրդի համար և ժողովրդային խլրտումներն էլ մազաչափ չէին նուազի։

Բոլորովին այլ կերպ էին նայում Դումայի վրա նրա ձախակողմեան կուսակցութիւնները։ Սրանք, ի նկատի առնելով՝ թէ՛ բիւրօկրատիայի դեռ ևս ամուր դիրքը և թէ՛ նրա մշակած հիմնական օրէնքները, հէնց սկզբից անյոյս էին Դումայի օրէնսդրական աշխատութիւնների մասին։ Նրանք ասում էին, որ մինչև հին ռեժիմը մի լաւ պարտութիւն չը կրէ փողոցում, մինչև ինքը ժողովուրդը չը մշակէ իր սահմանադրութիւնը, Պետական Դուման անկարող պիտի լինի մի որ և է օրէնսդրական արդիւնաւոր գործ կատարել։ Եւ քանի որ այդ դեռ չը կար, ուրեմն Պետական Դուման նրանց համար ոչ թէ մի օրէնսդրական ժողով էր համարվում, այլ պարզապէս ագիտացիայի մի ազատ ամբիոն, որտեղից համարձակ և անարգել կերպով կարելի էր յեղափոխականացնել ժողովրդին և վճռողական րոպէին Պետական Դուման յեղափոխութեան մի կենտրոնական մարմին դարձնել։

Այս տեսակէտով Պետական Դումային նայելով, վստահութեամբ կարող ենք ասել, որ նա իր գոյութեան ընթացքում չափազանց արդիւնաւոր գործ կատարեց։ Դումայում արտասանված ճառերը, մինիստրութեան ուղղված մի շարք հարցապնդումները, այդ ինտերպելացիաների տուած լկտի պատասխանները, օրէնսդրական նախագծերը, կառավարութեան դէպի այդ նախագծերը ցոյց տուած բացասական վերաբերմունքը, մի խօսքով՝ այդ բոլորը որոտի ձայների նման հասնում էին Ռուսաստանի ամենախուլ անկիւնները և իրանց ազդեցութիւնը թողնում։ Կարելի է ասել որ Ռուսաստանի ժողովրդի քաղաքական գիտակցութիւնը այս երկու և կէս ամսվայ մէջ զարգանում էր ոչ թէ օրերով, այլ ժամերով, թէև, այս էլ պիտի ասել, յեղափոխութեան վճռողական րոպէն շատ վրա չը հասաւ, ինչպէս որ ձախակողմեան կուսակցութիւններն էին մտածում, Պետական Դուման էլ, նրանց ցանկութեան համաձայն, յեղափոխութեան կենտրոնական մարմինը չը դարձաւ։

Պետական Դումայում, բացի աջ ու ձախ թևերից, կար և կենտրոնը, որը ամենից բազմամարդն էր։ Սրանք ձախակողմեաններից աւելի լաւատես էին Դումայի օրէնսդրական աշխատութիւնների վերաբերեալ։ Թէև ձախակողմեանների նման, նրանք էլ համոզված էին, որ տիրող պայմանների մէջ, հիմնական օրէնքների սահմաններում, անհնարին է մի որ և է արդիւնաւոր աշխատանք կատարել, բայց և այնպէս նրանք, ենթադրում և հաւատում էին, որ այս առաջին Պետական Դուման պիտի կարողանայ սահմանադիր ժողովի կերպարանք ստանալ և, խորտակելով Վիտտէ-Դուրնօվօյի մշակած հիմնական օրէնքները, ամբողջական սահմանադրութիւն մշակել։

Ամբողջ ժամանակ Դումայի կենտրոնը այդ բանին էլ ձգտում էր։ Նրանք ամեն կերպ աշխատում էին կամ համոզմունքի ոյժով և կամ ժողովրդային շարժումների վախով ստիպել մինիստրութեանը հրաժարվել և իսկական պարլամենտական մինիստրութիւն հաստատել, որից յետոյ, ի հարկէ, Պետական Դուման բոլոր տէրը կը դառնար և շատ հեշտ կը լինէր նրան սահմանադիր ժողովի վերածել կամ նոր սահմանադիր ժողով հրաւիրել։ Մի ժամանակ թւում էր, թէ յիրաւի այդ կուսակցութիւնը իր նպատակին բաւական մօտեցել էր. շաբաթներ շարունակ մինիստրութեան հրաժարականի ու նոր կաբինետ կազմելու մասին էր խօսվում։ Սակայն մեծ ներ էր այդ կուսակցութեան հիասթափութիւնը, երբ մինիստրութեան հեռանալու փոխարէն, Պետական Դուման ցրվեցին։

Այսպէս ուրեմն, Պետական Դումայի, իբրև օրէնսդիր ժողովի վերաբերեալ, ամենամեծ ամենից շատ հիասթափվողը հէնց ինքը բիւրօկրատիան և աջակողմեան կուսակցութիւնները լինելու են, որովհետև նա մազաչափ անգամ նրանց իղձերին չը ծառայեց. բիւրօկրատիայի խախտված դիրքը ուղղելու էլ ժողովրդային շարժումները դադարեցնելու։ Ընդհակառակը, ինչպէս տեսանք, Դումայի շնորհիւ ժողովրդի քաղաքական գիտակցութիւնը աւելի ևս զարգացաւ և նրա շարժումները այսուհետև աւելի սպառնալի կը լինեն հին ռեժիմի համար։

Հիասթափվել կարող են ժողովրդի և այն անգիտակից տարրերը, որոնք ենթադրում ու հաւատում էին, թէ հին ռեժիմը արդէն տապալված է և թէ Պետական Դուման պիտի կարողանար այն նեղ գնդանների մէջ, որ նա դրված էր, օրէնսդրական մարմին լինել ու օրէնսդրական արդիւնաւոր աշխատանք կատարել։ Իսկ նրանք, որոնք այդպիսի յոյսեր չէին փայփայում, որոնք Պետական Դումայի վրա նայում էին ոչ թէ իբրև մի օրէնսդիր մարմնի վրա, այլ միայն իբրև պրօպագանդայի մի ազատ ամբիոնի, իբրև յեղափոխութեան հնոցի վրա, այդ սները, ասում ենք, հիասթափվելու ոչինչ չունեն և չեն հիասթափվի։ Որովհետև եթէ Պետական Դուման իր երկու և կէս ամսվայ գործունէութեան ընթացքում մի հսկայ օրէնք միայն մշակեց, բայց և միևնոյն ժամանակ նա հարիւր հազարաւոր թմրած ու գոյացած ուղեղներին մտածելու [illegible] պաշար և քաղաքական գիտակցութիւն տուեց: Իսկ դա ներկայ ժամանակներում շատ աւելի կարևոր ու մեծ նշանակութիւն ունի, քան տասնեակ չը գործադրվող օրէնքները:

Խ.-Ազատ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԿԵԱՆՔԻՑ

(Նամակ Մոսկվայից)

II

Յուլիսի 15-ին

Թէև քիչ ուշ, սակայն աւելորդ չեմ համարում երկտողով յայտնել «Մշակ»-ի ընթերցողներին այն մասին, թէ ինչպէս ընդունվեց Պետական Դումայի ցրվելու լուրը Մոսկվայում:

Ամսիս 8-ի երեկոյեան հեռագիրները թէև այդ մասին արդէն հաղորդել էին, և հետևեալ օրը յուլիսի 9-ին, թէև յամառ կերպով լուրեր էին պտտում Պետական Դումայի ցրվելու մասին, բայց հասարակութեան մի մասը յոռետեսութեամբ վերաբերվեց, չը նայած որ միւս մասը լաւատես էր դէպի կառավարութիւնը:

Երբ յուլիսի 9-ին, կէսօրից անց, քաղաքապետ պ. Ռէյնբոտի կողմից պաշտօնապէս յայտարարվեց Պետ. Դումայի ցրվելու մասին, այն ժամանակ ամենքի կասկածները փարատվեցին, բոլորին յայտնի դարձաւ պատմական այն մեծ ակտը, որ կատարվեց ռուս ինքնակալ կառավարութեան կողմից: Քաղաքապետի պաշտօնական յայտարարութիւնների մի մասը պատռվում է և դէն է ձգվում, իսկ «իսկական ռուս մարդիկ» հրճուանքով կարդում և զմայլվում են: Հրճվում է և Գրինգմուտը... Նա միապետական կուսակցութեան ընդհանուր ժողով է հրաւիրում, ուր ներկայ է լինում մօտ 1000 մարդ. այդտեղ զգացված ճառեր են արտասանվում, ապա շնորհակալական հեռագիրներ են ուղարկում Թագաւոր Կայսրին, Գօրեմիկինին, Ստոլիպինին, և, ինչ էք կարծում, մինչև իսկ Դուբասովին, որը տեղըս ընդհանուր-նահանգապետ եղած ժամանակ հովանաւորել և հայրաբար խնամել էր Գրինգմուտին իր արբանեակներով... Խօմ երախտապարտ պէտք է լինել... Այդտեղ իւրաքանչիւր տաք ճառին հետևում են որոտալից ծափահարութիւններ հիմնով և ուռաներով...

Խօսում է նաև Շմակով, որի խօսակցութեան առարկան, ինչպէս միշտ, այնպէս էլ այստեղ, խեղճ ու թշուառ հրէաներն են:

«Կրամօլնիկների» հիմնարկութիւնը, Պետական Դուման, ի հարկէ, շատ խիստ կերպով քննադատվում և ջարդվում է:

Շատերը, ինչպէս նաև կառավարութիւնը, համոզված էին, որ ընդհանուր քաղաքական գործադուլ շուտով կը հրատարակվի և անկարգութիւններ կը սկսվեն... Կառավարութիւնը ամենախիստ միջոցների դիմեց... Բոլոր կայարանների ուղղութեամբ ձգված տեղերի վրա պահապան զօրք նշանակվեց, պօստատունը, պետական բանկը, զօրանոցները, բոլոր պետական և հասարակական հիմնարկութիւնները նոյնպէս խիստ պահպանվում են: Ոստիկանական պօստերը 2—5 հոգուց են բաղկացած. իսկ գիշերապահները հրացաններով են շրջում գիշերները: Աւելի խիստ պահպանվում է Նիկոլաեւսկի կայարանը, ուր մինչև Պետերբուրգ, բոլոր կայարաններում, պահապան զօրք է դրված: Ոստիկանների պահպանութիւնը նոյնպէս ուժեղացրած և գիշեր ցերեկ կազմ ու պատրաստ են ապստամբութիւնը ճնշելու, անկարգութիւնների առաջըն առնելու:

Այս բոլորը տևում է մինչև օրս, և երևի շատ էլ երկար կը տևի:

Սակայն ժողովուրդը չապստամբվեց. ոչ մի դեմօնստրացիա, ոչ մի բազմամարդ միտինգ Պետական Դումայի ցրվելու առիթով: Մի քանի թեթև համախմբումներ և ժողովներ, ճիշտ է, տեղի ունեցան, բայց շատ աջող ելք ունեցան:

Պետական Դումայի ցրվելը թէև առաջին օրերում բաւական նպաստեց պետական թղթերի արժէքի ընկնելուն, բայց վերջերս, երբ սպասված անկարգութիւնները չեղան, դարձեալ գները բարձրացան:

Քաղաքի որ փողոցով կուզէք անցէք, դուք ամեն քայլափոխում կը հանդիպէք լաւ զինված ոստիկանների և պահապանների, և այնքան շատ, որ հաշուել չի լինի: Նրանց հրացանների սուինների ծայրերը քիչ է մնում մարդու աչք մանեն... Ժողովրդի մի մասը խիստ զայրացած է ադմինիստրացիայի ձեռք առած այդպիսի կոպիտ միջոցների դէմ, քանի որ կարիք չը կայ, և ուժեղացած պահպանութիւնն աւելորդ տեղից շարունակվում է քաղաքումս և Մոսկվայի նահանգում...

Ինչու համար է այս բոլորը, ինչ անունով և ինչ նպատակով... այդ մեզ համար գաղտնիք է. դա կառավարութեան գործն է. թող նա մեզ բացատրի, թէ ինչումն է բանը և ինչ է կատարվել...

Պէտք է նկատել նաև այն, որ ընդհանուր քաղաքական գործադուլ հրատարակվելու և մօտակայ ապագայում անկարգութիւններ ծագելու մասին անվերջ ու անվերջ խօսում են ու տարբեր կարծիքներ յայտնում... Իսկ թէ որքան այդ հնարաւոր և հաւանական է, այդ մասին հետևեալ անգամ...

Ոսկու-Ջօն

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Բաշքենդ, յուլիսի 15-ին

Ժողովրդի թշուառ կեանքի մէջ այսօր աւելի քան երբևիցէ աչքի է ընկնում գիւղացուն ընկճող այն չարիքը, որ հարկ է կոչվում: Կառավարութիւնը մնացած բոլոր հարցերին մատների արանքով է նայում: Երկրի բարօրութիւնը շատ չէ հետաքրքրում երկրագործական, լուսաւորութեան մինիստրութիւններին: Ինչ փոյթ, թէ գիւղացին խարխափում է խաւարի մէջ, բառի բուն նշանակութեամբ ոչընչանում է քաղցից: Չը կայ այս անիծած աշխարհում հաղորդակցութիւն, չը կայ ուսումնարան, չը կայ ընկերակցութիւն, չը կայ ձգտում դէպի լաւ ու բարձր կեանք. ժողովուրդը կարծես զուրկ է տեսնելու ընդունակութիւնից, գլորվում է տանջանքի մէջ, ուշ է գտնում ազատվելու ճանապարհ: Այդ չէ հետաքրքրում կառավարութեանը, այդ հայրե-

րի ու հովանաւորների (?) վոհմակին: Մի բան միայն կառավարութիւնը չի մոռանում, դա հարկն է, աղքատ գիւղացու օրհասը: Դժոխային մեքենայութիւններով եղբայրասպան դաւ նիւթվեց բաղդակից հարևան ցեղերի մէջ. մի բովում բովվող, մի ցաւով տանջվող գիւղացիութիւնը բաժանվել է թշնամի բանակների. քայքայվեց գիւղացին. այսօր նա, սովալլուկ՝ վայրենի դարձած, սարի խոտը կրծելով է յաճախ իր քաղցը յագեցնում: Բայց պրիստաւի ձայնը որոտում է նրա ականջին՝ հարկ, կօզակի մտրակը իջնում է կորացած մէջքին, ու գիւղացու բթացած ինքնասիրութիւնն էլ չէ զգում հայհոյանքների տարափը, որ միայն ներկայ ոստիկանութեան վիժմունքների ցինիկ արտայայտութիւնը կարող է հնարել: Գիւղացին տանից տեղից աւարա է ընկնում, բայց նա իր վերջին ուլախից պիտի զրկվի, իր տան վերջին գերանը պիտի ծախի, միայն հարկը գդի:

Պրիստաւի ինչ գործն է, թէ արտը կարկուտն է ծեծել, այգին սելաւը տարել, անձրևը տունը փուլ ածել, ազարը տաւարը սատկացրել. նրան փող է հարկաւոր, չոր փող, զրնգացող մետաղ: Թող հիւանդը անսնունդ ու անբժիշկ տանջվի խոնաւ յատակին, թող կինը իր մերկութիւնը ծածկել չը կարողանայ, այդ փոյթ չէ, միայն հարկը ճարվի: Նայում ես այդ անվերջ Մարկոսներին, Կիրակոսներին, Մամմադներին, Բայրամներին, ու անտանելի վիշտը քեզ պատում է. քեզնից կոպէկ են պաղատում, տանից ղաչաղ են ընկել հարկի պատճառով, ու նրանց բութ կերպարանքի վրա ըմբոստութեան մի գիծ չես գտնում. զարմանում ես, թէ ինչու ժողովուրդը այն պարզ բանը չի հասկանում, որ եթէ հարկ տալը անհնարին է, ուրեմն և կարելի է չը տալ:

Այստեղ պարզվում է այն գաղտնիքը, թէ ինչու ներկայ յեղափոխութեան օրին, էս «աւուր դատաստանին», երբ մեռածներն էլ յարութիւն առան, մեր գիւղացիները ընդհանուր տրամադրութեամբ չը վարակվեցին, կռիւ չը մտան իրենց դասակարգային շահերը և մարդկային իրաւունքները ձեռք բերելու: Այստեղ հայ-թուրքական հրէշաւոր դերը պարզվում է առաջ:

Գեղջուկ

ՄԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՀԱՅ-ԿԱԹՕԼԻԿ ՀԱՄԱԲԱԿՈՒԹԵԱՆ

II

Նախկին յօդուածում հ. Գ. Ն.-ի խեղաթիւրումները պարզելուց յետոյ, բնականաբար ընթերցողը պիտի հարցնէ, թէ այժմ ինչ պէտք է անել այդ կնճռոտ կացութիւնից դուրս գալու համար:

Նախ երկու խօսք՝ «Թեմական կառավարչի» թեկնածութեան մասին.—Այս գործի ամբողջ ընթացքում ես պաշտպանել եմ միայն մի անձի թեկնածութիւնը, բայց դժբախտաբար աջողութիւն չեմ ունեցել, որովհետև հանդիպել եմ հռոմէական բացարձակ non possumus-ի (չենք կարող): Այս անձը՝ Վիեննայի Մխիթարեաններից հ. Յովսէփ վարդ. Մարգարեանն է, որ երկար ժամանակ պաշտօնավարել է Խրիմում: 1904-ին ես նրա հետ մօտից ծանօթացայ Վիեննայում և ապա գնացի Հռոմ. Մարգարեանն արդէն ներկայացվել էր ռուս կառավարութեան կողմից, բայց Հռոմ մերժել էր նրան հաստատել: Վիեննայի միաբանութեան աթոռակալը, հ. Մինաս վարդապետ Նուրիխան, անձամբ վկայ է, թէ ես ինչպէս Հռոմում մի ամբողջ օր զբաղված էի տեղեկագիր կազմելով Կովկասի հայ-կաթօլիկների դրութեան մասին: Այդտեղ պաշտպանում էի Մարգարեանի թեկնածութիւնը: Այս տեղեկագիրը ես ներկայացրի պապի արտաքին գործերի ղեկավար կարդինալ Մէրրի դէլ Վալին, որից կախված է այս հարցի լուծումը: Պէտք է գիտնալ, որ Ռուսաստանի կաթօլիկների բոլոր եկեղեցական գործերը, ինչպէս և Ռուսաստանի բոլոր կաթօլիկ եպիսկոպոսները ենթարկվում են Հռոմի արտաքին գործերի տեսչութեանը, իսկ բովանդակ Արևելքի կաթօլիկները՝ որոնց մէջ և Թիւրքիայի հայ-կաթօլիկները՝ կախում ունեն Պրոպագանդայի Նախագահից, որ այժմ կարդինալ Գօտտին է, որի հետ ես նոյնպէս տեսնվել եմ, բայց այս հարցի նկատմամբ նա ինձ ուղարկել է պապի արտաքին գործերի ղեկավարին:

Կարդինալ Մէրրի դէլ Վալին ես կարդացի իմ տեղեկագիրը և բերանացի բացատրութիւններ ես տուի: Բայց կարդինալը ինձ կտրական կերպով պատասխանեց, թէ «արտաքին գործերի վերաբերեալ կարդինալաց ժողովը՝ congregazia-ն արդէն քննել էր Մարգարեանի թեկնածութիւնը, ի նկատի էր առել նրա մասին ստացված բոլոր տեղեկութիւնները և անյարմար էր գտել նրան այդ պաշտօնին, ուստի անկարելի էր վերադառնալ այդ հարցին»...: Հ. Մարգարեանի համար միջնորդել էր նաև Մխիթարեան միաբանութիւնը՝ յանձին Նուրիխան վարդապետի, որ այնքան մօտ է նոյն իսկ պապին, բայց Պիոս X չէր յանձն առել միջամտել յիշեալ «congregazia»-ի որոշման դէմ:

Մեր տեսակցութեան ընթացքում կարդինալ Մէրրի դէլ Վալ ինձ յայտնեց թէ, ինքը ճանաչում է տէր Սարգիս վ. Տէր-Աբրահամեանին, որի ընտրութեանը Վատիկանը դէմ չէր լինի: Ուստի երբ անցեալ տարի մայիսին Թիֆլիսում համագումար ժողով ունեցանք, ես ամենայն անկեղծութեամբ պատմեցի ժողովին Հռոմում իմ ունեցած այս տեսակցութիւնների արդիւնքը, թէ ինչ անցաւ այդտեղ, ես արդէն պատմել եմ այս յօդուածի I բաժնում: Հ. Գ. Ն-ի բարեկամ պետական պաշտօնեայի բարոյական ճնշումը մի կողմից և Արդուինի ու Ախալցխայի թեմական վիճակների մէջ պառակտումի երկիւղը միւս կողմից՝ արին այն, որ «Թեմական կառավարչի» պաշտօնի համար ժողովը յարմար գտաւ ընտրել տ. Պօղոս վ. Նահապետեանին:

Պէտք է այժմ ուղղակի խոստովանել, որ այս ընտրութիւնը շատ խանգարեց մեր կարևոր հարցի շուտափոյթ իրագործման. խանգարեց, որովհետև, չը նայելով մեր բոլոր ջանքերին, այն անվստահութիւնը, որ հոգևոր բարձր շրջանները ունէին հ. Գաբրիէլ Նահապետեանի վրա, գլխաւոր արգելք էր հանդիսանում նրա հօրեղբօր թեկնածութեան հաստատութեան, թէև, կրկնում ենք, Պօղոս վ.-ի ծերութիւնն և անուս լինելն էլ անշուշտ որոշ դեր էր խաղում այս հարցում: Բացի դրանից մեզ համար բուն կարևորը այն չէր, թէ մի հայ-կաթօլիկ վարդապետ հաստատվի «առաքելական կառավարիչ» տիտղոսով, որ դարձեալ պիտի մնար լատին եպիսկոպոսի իրաւասութեան տակ, այլ այն էր, որ կառավարութիւնը վերջնականապէս ընդունի Կովկասում հայ-կաթօլիկ եպիսկոպոսական աթոռի հաստատման անհրաժեշտութիւնը:

Այս նպատակով ես հարկ համարեցի մի ընդարձակ տեղեկագիր ներկայացնել Փոխարքայի վարչութեան, որտեղ պատմական փաստերի վրա հիմնված ապացուցանում էի այդ անհրաժեշտութիւնը: Այս տեղեկագրում առաջ էի բերում ի միջի այլոց այն երկար տևողութիւնը, որ ունեցել է հայ-կաթօլիկների եպիսկոպոսական աթոռը այժմեան Ռուսաստանի սահմաններում, սկսելով XIV դարում (Հին-Նախիջևանի գաւառում) և փոքր ընդհատումներով շարունակվել է մինչև անցեալ դարի վերջը, երբ Արդուինում վախճանվել է վերջին եպիսկոպոսը՝ Յով. վ. Զաքարեան (1887 թ.): Այս տեղեկագրի մատուցելն անհրաժեշտ էր այդ միջոցին նաև այն տեսակէտով, որ վրացի-կաթօլիկներն էլ, դրդված անշուշտ հայ-կաթօլիկների նոր ջանքերից, խնդրամատոյց էին եղել կենտրոնական կառավարութեան իրանց էլ յատուկ եպիսկոպոս նշանակելու, որ մինչև մի աստիճան կարող էր արգելք հանդիսանալ մեր դատին: Չը մոռանանք, որ վրացի-կաթօլիկների ձգտումների պաշտպան պրոֆ. Խախանով համարձակվել էր լրագրութեան միջոցով յայտարարել, թէ Կովկասում վրացի-կաթօլիկների թիւը իբր թէ հասնում է 60,000 հոգու: Դժուար է, ի հարկէ, աջողել հիմնվելով այդպիսի հրէշաւոր սուտի վրա, բայց մեր գործին խանգարել միշտ կարելի է:

Ես՝ ամենայն անկեղծութեամբ՝ իմ այս նոր քայլի մասին նոյնպէս յայտնեցի հ. Գ. Նահապետեանին, որ, ինչպէս հիմա երևում է, իրան idée fixe ունենալով Տէր-Աբրահամեանի հաւանական թեկնածութիւնը, ինչ միջոցով էլ լինի, արգելելու, այն միջոցին զբաղված է եղել մեր կաթողիկոսի «վանդալական» կարգադրութեան և իմ «թոթովանքների» դէմ գրգռիչ նամակներ գրելով գաւառական լիազօրներին և ուրիշներին:

Այս անհրաժեշտ բացատրութիւններից յետոյ անցնենք այն հարցին, թէ այժմ ինչ գործնական միջոց հարկաւոր է ձեռք առնել գործի աջող ելքի համար:

Հաստատ աղբիւրից ինձ յայտնի է, որ Փոխարքան իր Պետերբուրգ ուղղած զեկուցման մէջ պաշտպանած է Կովկասում կաթօլիկ հայերիս համար յատուկ եպիսկոպոսական աթոռ հիմնելու հարցը, ուստի այս մասին այլևս նոր որևէ դիմում անելու հարկ չը կայ: Բայց որովհետև այդ միևնոյն զեկուցման մէջ մեր պետիցիայի հիման վրա՝ նա պաշտպանել է նաև Պօղոս վ. Նահապետեանի թեկնածութիւնը՝ «կառավարչի» պաշտօնի համար, իսկ կաթօլիկ հոգևոր բարձր իշխանութիւնը, ինչպէս բացատրել եմ, դէմ է դրան, ուստի այդ պատճառով ամբողջ հարցը ձգձգվում է և մնում է ներքին գործերի մինիստրութեան մէջ: Ի նկատի ունենալով այս «աննպաստ» հանգամանքը, անհրաժեշտ է, որ Պօղոս վ. Նահապետեան անմիջապէս գրաւոր հրաժարական ներկայացնէ Փոխարքայի դիւանատան (կարող է պօստով ուղարկել՝ յայտնելով) որ ինքը իր զառամեալ տարիքի պատճառով անկարող է զգում իրան ընդունել «առաքելական կառավարչի» պաշտօնը, որ առաջարկել են հայ-կաթօլիկ ժողովրդի ներկայացուցիչներն իրանց՝ Փոխարքային տուած պետիցիայում: Աւելորդ չեմ համարում յիշեցնել ի գիտութիւն Նահապետեանի, որ այս աղերսագիրը կրում է 1906 մայիս 16 թւականը և ներկայացված է յունիսի 1-ին: Այսպիսի մի պաշտօնական հրաժարական անհրաժեշտ պէտք է լինի Պօղոս վարդապետին, քանի որ, ինչպէս լսել եմ մասնաւոր աղբիւրից, նա արդէն մտադրվել է հրաժարվել ոչ միայն այս թեկնածութիւնից, նոյնիսկ քահանայագործութիւնից իր մեծ տարիքի պատճառով (85—90 տարեկան է արդէն): Ես առանձնապէս պնդում եմ այս կէտի վրա, որովհետև հաստատ հիմք ունեմ կարծելու, որ Փոխարքայի դիւանատունը, ստանալով այդ հրաժարականը, կը հաղորդէ այս մասին ներքին գործերի մինիստրութեան, որով կը դիւրանայ հարցի լուծումը: Եթէ հ. Գ. Ն. արգելք հանդիսանայ իր հօրեղբօր այս պաշտօնական հրաժարականին, նա պարզապէս, ինչպէս ասում են, վրացի-կաթօլիկների հացին եղ քսած կը լինի, որը անշուշտ նա չի ցանկանայ: Յետոյ պէտք է այլևս մեր կողմից մի նոր թեկնածու առաջարկել կամ «ընտրել»:

Այս կէտի նկատմամբ հարկաւոր եմ համարում բացատրել հետևեալը: 1903-ի կարգադրութեան համաձայն, որ առաջարկվել է Հռոմից և ընդունվել Պետերբուրգից, այս հարցում ինչպէս նախաձեռնութիւնը, նոյնպէս և հաստատութիւնը բացառապէս կախում ունի Վատիկանից: Մինիստրական հրամանագրի մէջ ուղղակի ասված է—§ 1 Управленіе армяно-католическими приходами на Кавказѣ будетъ временно поручено духовному лицу армянскаго обряда, назначенному святымъ отцомъ по предварительному соглашенію съ правительствомъ. § 2. Это духовное лице будетъ носить званіе «Армянскаго апостольскаго администратора» և այլն:—Սրանից պարզ երևում է, որ «հայ առաքելական կառավարիչը» ոչ թէ ընտրվում է ժողովրդից, այլ «նշանակվում է սուրբ հօրից (Հռոմի պապից)»: Եւ եթէ մենք մեր կողմից թեկնածու չառաջարկենք, կամ «եկեղեցական ադւէններ» (ըստ հ. Գ. Ն.-ի բացատրութեան) գաղտնի դիմումներ չանեն ի վնաս կամ ի նպաստ այս կամ այն թեկնածուի, որով առիթ չեն տայ կառավարութեան նորից գործը յետաձգելու կամ ձգձգելու, ապահովաբար Հռոմ շուտով համաձայնութեան կը գայ ռուս կառավարութեան հետ: Իսկ թէ «սուրբ հայրը» պատշաճաւոր մի անձ «կը նշանակէ,» այդ մասին պէտք ենք վստահութիւն ունենալ Կ. Պոլսի պատրիարքի Հռոմում ունեցած ներկայացուցիչների վրա, որոնք ճանաչում են մեր բոլոր «առաջնորդացու» վարդապետներին, լաւ տեղեակ են ամբողջ գործին և կը յանձնարարեն անշուշտ արժանաւորագոյնին:

Քանի գոյութիւն ունի Վատիկանից առաջարկված ու կայսրից ընդունված այն կարգադրութիւնը, թէ «առաքելական կառավարիչը» ոչ թէ ժողովրդից է ընտրվում, այլ «նշանակվում է ս. հօրից», մենք այլապէս չենք կարող վարվել և միայն բացասական արդիւնքի կը հասնենք, ինչպէս տեսանք Պ. վ. Նահապետեանի ընտրութեան փորձով: Իսկ երբ մենք օրինաւորապէս հոգևոր վարչութիւն կունենանք, այն ժամանակ կարող ենք և պէտք ենք անել հարկ եղած դիմումները, որ մեզ տրվի ընտրողական իրաւունք ապագայի համար, գոնէ այն չափով, որչափ ունեն Թիւրքիայի կաթօլիկ հայերն իրանց թեմական եպիսկոպոսներին ընտրելու հարցում:

Ես յոյս ունեմ, թէ Պօղոս վ. Նահապետեան և իր եղբօրորդին՝ հ. Գ. Ն. այնքան պատճանաչ կը գտնվեն, որ անյապաղ կիրագործեն այս հրաժարականի առաջարկը ի սէր ընդհանուրի բարիքի: Իսկ եթէ Պօղոս վ. չը հրաժարվի... Դրա հնարն էլ կայ. բայց նախ այս վերջին միջոցն էլ փորձենք ի սէր Արդուինի և Ախալցխայի վիճակների միութեան...

Սարուխան

«ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ»

Տասն տարի առաջ էր:

Զուլումի աշխարհից մեր երկիրն էին թափվում թշուառների խմբերն անվերջ շարքերով: Տաճկահայի «սիրուն վաթանն» էր,—այդ երբեմն չքնաղ աշխարհը,—որ սրի ու կրակի մատնված, արեան ծով դարձած, մոխրակոյտի փոխված, այլ ևս անզօր էր պատսպարել իր հարազատներին իր գրկում և նրանք սարսափահար փախչում էին այդ դժոխքից... վազում մեզ մօտ:

Մերկ և քաղցած էին նրանք, արտասուաթոր ու վշտահար. լքված ու յուսահատ էր նրանց սիրտը, տանջված ու վիրաւոր նրանց մարմինն ու հոգին. և այնպէս խղճալի էին նրանք...

Եւ գալիս էին նրանք իրանց «բաղդաւոր» եղբայրների մօտ, նրանց պատմելու իրանց վիշտը, ցոյց տալու իրանց խորին խոցերը. գալիս էին նրանց ապաւինելու...

Եւ նրանց յոյսերն արդարացան:

Ռուսահայը, չը նայած իր կրած բարոյական հալածանքին, իր սրտում թաղցրած իր սեփական վիշտն ու տառապանքը, պահ մի մոռացաւ իր ցաւը և եղբայրական ձեռք մեկնեց նրանց օգնելու, սփոփելու, նրանց արցունքը սրբելու...

Տաճկահայը մի անկիւն ստացաւ իր եղբօր մօտ իր գլուխը դնելու... և նա երախտապարտ էր...

—

Անցել էր տասնամեայ մի փոքրիկ շրջան:

Գաղթական անտուն-անտէր տաճկահայը մի կերպ տեղաւորվել, պատսպարան էր գտել մեր երկրի այս ու այն խորշերում: Չէր լսվում այլևս նրա լացն ու հառաչանքը, դադարել էր նրա յորդ արտասուքը: Նա արդէն գտել էր մի քանի փոքրիկ գործեր—մշակութիւն, հին շորերի առևտուր, որմնադրութիւն, մաշակարութիւն և այլն,—ու ապրում էր ինքնագլուխ, առանց այլևս ծանրութիւն դառնալու իր ռուսահայ եղբօր վրա:

Սակայն ժամանակը փոխվել էր, բաղդի անիւը շրջվել և մի օր էլ բաղդաւոր եղբայրը միանգամից զգաց իրան թշուառութեան անյատակ անդունդի մէջ: Նրա երբեմն պարզ հօրիզոնը մթագնել էր ահարկու փոթորիկներով, որոնք յանկարծ պայթեցին նրա գլխին սարսափելի ուժգնութեամբ, մահ ու դիակներ սփռելով նրա շուրջը, տրորելով ցոլելով նրա ողջ շրջապատը:

Հարուածն անսպասելի էր, նրա ոյժից զերիվեր. և նա յանկարծակիի եկած մի րոպէ ապշել, քարացել էր:

Իր հարևան անհամեմատ բազմաթիւ թուրք տարրը իր բոլոր թափով ու ծանրութեամբ շուռ էր եկել նրա գլխին և սպառնում էր բնաջինջ անել նրան:

Բագւում, Նախիջևանում, Շուշում և այլ մի քանի տեղերում նրանց արդէն աջողվել էր սրի ու կրակի ճարակ դարձնել հայերին և նրանց կայքը. բազմաթիւ էին հայերի տեսակները, անթիւ էր նրանց նիւթական վնասը... լսւում էր թէ ամեն ինչ կորած է մեզ համար...

—

Եւ ահա այդ օրհասական րոպէին, երբ կովկասահայը լարում էր իր բոլոր ոյժերը դիմադրաւ լինելու վերահաս վտանգին, կանգնեցնելու վայրենութեան հասած արիւնարբու հարևանի խաժամուժ գնդերի տարերային հոսանքը, ահա այդ ճակատագրական վայրկեանին հայի ինքնապաշտպանութեան խնդրի առաջին շարքերում մենք տեսնում ենք կուրծքը թշնամու սրին ու գնդակին դէմ տուած տաճկահայ գաղթականին...

Անօրինակ էր նրա հերոսութիւնը, բայց և շատ հասկանալի: Ո՞վ կարող էր աւելի զայրացած լինել անգութ մահմեդականից, ո՞վ էր աւելի շատ կրել իր կաշուի վրա նրա ծանր հարուածները, ո՞ւմ հոգին էր աւելի խորը խոցված խոլամի ֆանատիկոս զաւակների ձեռքով և ո՞վ կարող էր աւելի լաւ երևակայել թուրքի յաղթութեան զարհուրելի հետևանքները.—ամենից աւելի տանջված ու նահատակ տարագիր տաճկահայ գաղթականը: Եւ զարմանալի չէ որ նա այնպիսի անձնուրաց թափով առաջ նետվեց դիմադրելու թշնամուն, պատժելու նրան, վրէժ լուծելու նրանից...

Այդ ամենը ոյժ և սիրտ էին տալիս նրան և նա կռւում էր անօրինակ քաջութեամբ, հերոսական յանդգնութեամբ. «աչքի տեղ աչքերը հանել, ատամի տեղ—ատամներ» նշանաբանով և այդպիսով ամենակարճ ժամանակում «գաղթական» խօսքը զարհուրանքի սիմվոլ դարձաւ Կովկասի թուրք ազգաբնակութեան աչքում... որն այնպէս սկսեց սարսափել նրանից, ինչպէս տաճիկն ու քիւրդը սարսում են «Ջան-ֆիդայից»...

—

«Գաղթականը» դարձաւ կոյր, խաւար ու երկչոտ թուրքի աչքում մի ազրայիլ, մի հոգեհան հրեշտակ, որից ազատվել չէր կարող ոչ ոք... և նրանից զարհուրում էին թուրքերը թէ քաղաքներում և թէ անհամեմատ աւելի գաւառում: Այս մի տարվայ ընթացքում բազմաթիւ դէպքեր եղան, երբ շնորհիւ 3—4 գաղթականի ազատվում էին վտանգաւոր տեղերում հայ փոքրիկ գիւղեր շրջապատող տասնապատիկ աւելի զօրեղ թուրք ամբոխի յարձակումից ու աւերումից:

Յաճախ կարելի էր լսել, թէ ինչու թուրքերը չէին յարձակվում այսինչ փոքր հայ գիւղի վրա, որը գտնվում էր թուրքերի բռան մէջ:—Որովհետև այնտեղ 3 գաղթական զինուորներ կան,—լինում էր պատասխանը:

«Թախթաղան էֆիա գիրան» (գաղթականի տունը)—անիծելիս ասում են միմեանց թուրք պառաւները: «Թախթաղան գեալըր» (գաղթականը գալիս է)—վախեցնում է թուրք կինն իր լացող երեխային: «Թախթաղաննան բէթարսան» (գաղթականից վատ ես)—հայհոյում են երբեմն միմեանց թուրքերը, և այլն:

Ահա այդպիսի սարսափ է տարածում գաղթական խօսքը թուրքի վրա: Եւ այդպէս խիզախ կռւող, անվեհեր բազէ է դարձել այն տաճկահայը, որը մեր երկիրը փախչելիս նման էր սրտաճաք, փետրահան եղած հալածական ճնճղուկի...

Վերածնութեան տասնամեայ մի փոքրիկ շրջան կարողացաւ այդպէս փոխել նրան...

Ճիշտ է, հայ-թուրքական այս անվերջ ընդհարումների ժամանակ մեր ինքնապաշտպանութեան շարքերը մեծ մասամբ խառնւում էին տեղացի կուռ ոյժերով, որոնք հերոսական անձնազոհութեան գործում ոչնչով պակաս չէին միւսներից և անշուշտ գործի ծանրութեան ամենամեծ մասը կրել են իրանց ուսերի վրա, սակայն մեր այս պատմական ճգնաժամի րոպէում տաճկահայ գաղթականը ցոյց տուեց մի այնպիսի անձնուրացութիւն, որպիսին երևակայել չէր կարող կովկասահայը տասն տարի առաջ, երբ նա լցված միայն մարդասիրական գթասրտութեամբ օգնութեան ձեռք էր մեկնում իրան ապաւինող արիւնաքամ ու կիսակենդան տաճկահայ գաղթականին:

Տաճկահայ գաղթականները վերադարձրին իրանց ստացած օգնութիւնը:

Լ. Մարկոսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 19 յուլիսի

Ներկայումս ընտրութիւններ կատարելը անհնար է, իսկ եղածները միանգամայն ապօրինի...

Սա լոկ իմ անձնական կարծիքը չէ, այլ հայութեան ներկայ արինոտ կեանքի արտայայտութիւնը:

Գուցէ հայերից ոչ մէկը այնքան մօտ կերպով լսած չը լինի ժողովրդի, բուն ժողովրդի բերանից այն հուժկու բողոքն ու տրտունջը, «կոնդակի» և առհասարակ ներկայումս կատարվելիք ընտրութեանց առիթով, քան թէ նա, որ յանձն է առնում ծխերին որոշված օրը ժողովի հրաւիրելու: Ես, նուաստս լինելով վերջին տեսակներից մէկը, սեպուհ պարտքս եմ համարում հրապարակ հանել այն աւելի քան արդար տրտունջները, որ լսել և կրել եմ անձամբ: Ծայրագոյն հոգևոր իշխանութեան հրամանով Թիֆլիսի բոլոր եկեղեցիներում ամսիս 16-ին նշանակված էր ժողով «պատուիրակների» ընտրութեան: Այդ մասին թերթերում իւրաքանչիւր եկեղեցու վարչութեան կողմից տրված էր յայտարարութիւն և յանձնարարված բոլոր եկեղեցիների տիրացուներին հրաւիրաթերթեր տարածելու ժողովրդի բոլոր խաւերում, այնպէս որ ապագայում ոչ ոք բողոքաւոր չլինի: Պատահաբար ինձ վիճակված էր շրջեցնելու երկու եկեղեցիների երկու տարբեր (ոչ միաբան) քահանաների՝ թւով մօտ երեք հարիւր (տան) ծխերում: Թերթիկները ձեռքիս մօտենում եմ առաջին պատահած ծխականին, տալիս եմ հրաւիրաթերթը, նա կարդում է. ես սպասում եմ, որ ուրախութեամբ իր մասնակցութիւնը պէտք է յայտնի այդպիսի մի ցանկալի ժողովի... բայց ինչ եմ լսում.—Կաթողիկոսի բան ու գործը կարվել է, որ ներկայ պայմաններում եկեղեցական խնդիրներով է մեզ զբաղեցնում. ազգը արեան բաղնիքի մէջ խեղդվում է, նա հաց չունի, սովը մահ է սպառնում. փոխանակ ազգի գոյութեան մասին մտածելու, ինչերի մասին էք ժողովների հրաւիրում...»: Պատահում եմ երկրորդին. նա անգրագէտ է. ես հասկացնում եմ ժողովի նպատակը բուն կոնդակի. պատասխան եմ ստանում. «ազիէր, դաւլա տարաք, վախտ էք գտէլ. մենք չենք իմանում գլուխներս որտեղ թաքցնենք, որ պոգրոմներից ազատվենք, դուք էլ եկել էք մի կողմից էք մեզ նեղութիւն տալիս»: Գնում եմ երրորդի, չորրորդի և այլոց մօտ. սրանք էլ առարկում են. «Էս զալմաղալով, էս շօգով, էսքան հեռաւորութիւնից (օր. կամ Նախալօվկայից պէտք է մասնակցեն Վերայում, Վերայից Լուսաւորիչ ծխական եկեղեցիներում, մօտ 3-4-5 վերստ) ո՞մ զարդն է կարվել ժողովի գալու. գնացէք ոնց ուզում էք էնպէս էլ արէք, մենք զարու ենք...»: Կան ծխեր էլ, որոնց մօտենալ և խօսեցնել չի լինում. ոմանք գանգատվում են իրանց անաջող առևտրից, քասատութիւնից, ոմանք անգործութիւնից, մէկը ողբում է իր հարազատի սպանվելը կամ մահը, միւսը իր որդու կամ եղբօր ձերբակալվելն ու բանտարկվելը, այսպէս ամենքը մի մի ցաւով բռնված պատասխանում են, թէ մենք այնքան զարդ ունենք, որ հաւ ժամի ենք մոռացել, հաւ պատարագ. «ինչ ժամանակ է» ժողովների, դադար տուէք տեսնենք գլուխներս ինչ է գալիս»: Սոյնանման պատասխաններ համարեա ամենայն բացառութեամբ լսում էի ամենքից: Իսկ կանանց մասնակցութեանը ինձ հանդիպածներից շատերը զայրոյթով էին պատասխանում, և կոպիտ ու անվայել խօսքեր ուղղում այդ կարգադրութեան դէմ:

Ի հարկէ այդպէս վերաբերվում են ագէտներն ու նախապաշարվածները. բայց չէ՞ որ մեր ծխերից շատերը այդպիսիներից են: Ի միջի այլոց: Իսկ ամենամեծ խոչընդոտը ընտրութիւնների այն է, որ իմ շրջագայած բոլոր ծխերի համարեա հինգերորդ մասը բացակայում է քաղաքից, ոմանք շոգերի և ոմանք երկիւղների պատճառով: Ասածս փաստօրէն ապացուցանելու համար յայտնում եմ, որ իմ շրջագայած 200 ծխերից ամսիս 16-ին ժողովի եկել էին 4—5 հոգի... որոնց մէջ չէ եղել և ոչ մի կին: Միւս եկեղեցիներում կարող էր համեմատաբար աւելի լինել, բայց ի հարկէ ոչ օրինական թիւը լրացած:

Ըստ թեմիս առաջնորդի հրամանագրութեան, ընտրութիւնները ամսիս 23-ին վերջացած պէտք է լինեն. նշանակված է առաջիկայ կիրակի II և վերջին ժողովն է լինելու, հետևապէս ինչքան էլ ծխական ներկայ գտնվի ընտրութեանը՝ օրինաւոր պէտք է համարվի: Բայց մեզանում յայտնի է, որ ժողովները համեմատաբար բազմամարդ են լինում առաջին անգամը:

Երբեմն այդպիսով 5 10 և թէկուզ աւելի շատ 20-30 հոգով պէտք է մօտ 1000 մարդու կողմից պատուիրակ ընտրեն: Այդպիսի սակաւամարդ ժողովներում ամեն մի բախտախնդիր իրան ցոյց տալու տենչանքով տոգորված, շատ հեշտ կերպով իր նման կողմնակիցներ ճարելով, կարող է ներս խցկվել և պատուիրակ ընտրվել, որոնցից և պէտք է ընտրվեն կենտրոնական ժողովի համար պատգամաւորներ, որոնք պէտք է տնօրինեն հայ եկեղեցու և հայութեան հասարակական գործերը:

Աւելորդ չենք համարում յայտնել և այն, որ կառավարութիւնը ձերբակալելով տողերիս գրողին՝ ենթարկեց միօրեայ բանտարկութեան հրաւիրաթերթերի պատճառով:

Այդպիսի խոչընդոտներ ու դժգոհութիւններ առաջ են գալիս Կովկասի մայրաքաղաքում—Թիֆլիսում, որը ամենաապահով վայրն է համարվում ամբողջ փոխարքայութեան մէջ: Ապա ինչպիսի հսկայական արգելքների կարող են հանդիպել ուրիշ անապահով տեղերի հայ բնակիչները, որոնցից ամեն րոպէ անխուսափելի է թուրքի և պրովոկատորի հալածանքները:

Կարապետ Ղազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ այն լուրը, թէ բարձր շրջաններում մտադրութիւն կայ տալ ընդհանուր ընտրողական իրաւունք, հնարովի է, և որ այդ հարցը վճռված է բացասական մտքով: Սպասում են, որ մօտ օրերս մանիֆեստ կը հրատարակվի, որով կը նշանակվի ընտրութիւնների օրը, որը տեղի կունենայ դեկտեմբեր ամսում:

—

Բիւրոկրատական շրջաններում լուր է տարածվել, որ մինիստրական կաբինետը կազմվելուց անմիջապէս յետոյ կը կազմվի մի յատուկ մասնաժողով գիւղացիական հարցի համար, որի մէջ աչքի ընկնող մասնակցութիւն ունենալու համար կը հրաւիրվի Կուտլէրը: Արդէն դրա մասին Կուտլէրի հետ համաձայնութիւն է կայացրվել:

—

Մոսկվա քաղաքի կողմից Պետական Դումայի անդամ ընտրված Կոկօշկինը բոլորովին տեղափոխվել է Տերրիօկի, ուր և ապրում են սահմանադրական ռամկավար կուսակցութեան անդամներից շատերը:

—

Ստոլիպինի կարգադրութեամբ 50 հոգի գաղտնի ոստիկանական գործակալներ են ուղարկված Տերրիօկի, ուր ապրում է պատգամաւորների մի փոքրիկ մասը: Այդ գործակալները հսկում են, թէ ովքեր են երթևեկում պատգամաւորների մօտ, իսկ յետոյ Բէլօօստրով կայարանում կալանաւորում են նրանց: Այդպիսով յուլիսի 15-ին և 16-ին Բէլօօստրովում կալանաւորվել են մօտ 12 հոգի: («Св. Жизнь»)

—

Հեռագրատանը դարձեալ ցենզուրա է նշանակված լրագրական այն բոլոր հեռագիրների վրա, որոնցով հաղորդվում են զօրքերի մէջ կատարվող խլրտումների, ագրարական շարժումների և Պետական Դումայի նախկին անդամների վիբօրգեան խորհրդակցութեան մասին: Այդ հարցերին վերաբերվող բոլոր հեռագիրները ներկայացվում են պօստ-հեռագրական գլխաւոր կառավարչի բարեհայեցողութեանը. մանաւանդ խիստ ցենզուրայի են ենթարկվում Մոսկվայի լրագրների անունով ուղարկվածները:

—

Յուլիսի լոյս 21-ի գիշերը, ժամը 12-ին, Գունիբսկի և Ուդէլնի փողոցների անկիւնում 3 անյայտ անձեր 3 անգամ ատրճանակ արձակեցին և անյայտացան, իսկ առաւօտեան ժամը 4-ին 30 հոգուց բաղկացած մի խումբ, որը, ինչպէս երևում էր, վերադառնում էր Վակէյից, Ուդէլնի վարչութեան դարբասի վրա անյայտացաւ:

—

Արտասահմանից վերադարձել է Անիկինը: Նրա մասնակցութեամբ աշխատաւոր խմբակը և ս.-ռ. ֆրակցիան մի շարք նիստեր կը գումարեն, որոշելու յիշեալ կուսակցութիւնների գործելու տակտիկան:

—

Յուլիսի 22-ին, երեկոյեան ժամը $7\frac{1}{2}$-ին երկաթուղու գծի վրա Նազիրովայի կալվածքում գտնված է մի անյայտ 15 տարեկան տղայի դիակ:

—

Յուլիսի 22-ին, երեկոյեան ժամը 5-ին Ռոկեանի միջանցքում բնակվող Թեոդոսիա Խրօշինան իր հարևան Յակոբեանի հետ վիճելիս՝ վերջինին դանակով ծանր կերպով վիրաւորեց: Վիրաւորվածը տարվեց Միքայէլեան հիւանդանոցը և իսկոյն մեռաւ:

—

«Бирж. Вѣд.» լսել է, որ արդարադատութեան մինիստրի պաշտօնում Ստոլիպինի կաբինետում է ընդունվել սենատոր Ֆ. Ա. Կոնի:

—

Արդարադատութեան մինիստր Շչեգլովիտովը, ժողովրդական լուսաւորութեան մինիստր Կաուֆմանը, պետական կոնտրոլեր Շվանենբախը թողնում են իրանց պաշտօնները: Մինիստրների հեռանալը, «Новое Время»-ի ասելով, կապ ունի հասարակական յայտնի գործիչների կաբինետ մտնելու հետ:

—

Առաջին մինիստր Ստոլիպինը, «Рѣчь» լրագրի ասելով, մի քանի հասարակական գործիչների հետ ունեցած խօսակցութեան ժամանակ յայտնել է, որ 7 ամիս ժամանակամիջոցը, որը մնացել է մինչև Պետական Դումայի նոր գումարը նա գտնում է չափազանց չնչին իր նշանակած [illegible] բարենորոգումները անցկացնելու համար:

—

Մայրաքաղաքներում ներկայ տարվայ յունվար և փետրվար ամիսներում [illegible] ծառայութիւն վարելու համար թաղային վերահսկիչներին և քաղաքապահ ոստիկաններին պարգևատրել են 56,000 րուբլի յատկացնելով:

—

Պետական ռենտայի 4%-ի խորհրդաւոր պատմութիւնը շարունակվում է դեռ. Նախ արտասահմանում նրա սկզբնական արագ թափով ընկնելը ազդեց Պետերբուրգի գների վրա. գներն աննկատելի կերպով իջան: Նոյնպէս և մեզանում գների յանկարծակի խիստ բարձրացումը չէր համապատասխանում արտասահմանի բարձրացող հոսանքին: Այդ հանգամանքի հետևանքը այն եղաւ, որ ահագին տարբերութիւն ստեղծվեց օրվայ գների մէջ, որի վրա իր ժամանակին մատնացոյց արեց մամուլը: Թէ ով է այդպէս անյաջող կերպով ղեկավարում ու գներ նշանակում մեր ռենտայի սակագների վրա՝ յայտնի չէ: Ներկայումս մի ուրիշ նոր կուրիոզ է պատահել մեր 4 տոկոսային ռենտայի հետ. արդէն երկու օր է, որ գները ընկնում են Պետերբուրգում.

$73\frac{1}{4}$-ից նա իջել է 72 և $72\frac{1}{4}$, իսկ Բերլինում ռուսական արժէթղթերի տրամադրութիւնը հաստատուն է ու բարձրանում է: Ֆինանսների մինիստրի բացատրութիւնը, որ արտասահմանի գները հետեւում են Պետերբուրգի գներին, դարձեալ չը ճշտվեց, և ոչ միայն չը ճշտվեց, այլ և հակասական է: Արտասահմանի և Պետերբուրգի գների տարբերութիւնը այժմ պակասել է, և կառավարութեան այդ վնասակար ձեռնարկութիւնը կարճ ժամանակից յետոյ, ակամայից, պէտք է վերջ տալ: Մինչեւ որքա՞ն թանգ նստեց նա:

—

«Св. Жизнь» լրագիրը լսել է, որ կարգադրութիւն է եղել շուտով քննել բանւորական պատգամաւորների խորհրդի և Պետական Դումայի նախկին անդամներ ու խմբագիրներ Ուլիանովի, Օնիպկոյի, Բոնդարեւի, Սոլոմկոյի, Տեսլեայի և ուրիշների գործերը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

22 յուլիսի

ՀԵԼՍԻՆԳՖՈՐՍ, 21 յուլիսի: Սվէաբորգի խռովութեան մանրամասնութիւնները: Բերդային թնդանօթների մեծ մասը ապստամբների ձեռքին էր. բերդապահ զօրքը իր հրամանատարի հետ կռւում էր հրացաններով: Ռմբակոծութիւնը բերդին լուրջ վնասներ չը հասցրեց: Ձերբակալված են երեք օֆիցերներ, որոնք անցել էին ապստամբների կողմը: Ապստամբութեան մասնակցում էին մօտաւորապէս ութ հարիւր զինուոր և հարիւր զգեստափոխված քաղաքացիներ: Միակայմ նաւակներով առաջին փախուստի ժամանակ թնդանօթաձիգ զօրքը ռմբակոծում էր. միւս կողմից փախչողների մի մասը խեղդվեց, իսկ միւս մասը մթութեան շնորհիւ կարողացաւ ազատվել: Հեռագրական և երկաթուղային հաղորդակցութիւնը նորմալ է: Քաղաքի տեսքը աւելի քան հանգիստ է: Յուզմունքի ժամանակ կարմիր գվարդիայի դէմ գործում էին ոստիկանութիւնը և զօրքը, որոնք, սակայն, հրացաններ չէին պարպում. նրանք բաւականանում էին սպառնական դիրք բռնելով: Վիրաւորված է կարմիր գվարդիայի հրամանատարի օգնական Լայնէն:

ԿՐՈՆՇՏԱԴ, 21 յուլիսի: Քաղաքում լիակատար հանգստութիւն է տիրում: Նաւահանգիստը և վաճառականական բօրսան գործում են: Ծովակալ Բէկլեմիշեւի մահուան մասին տարածված լուրերը սխալ են: Զինուորա-դաշտային դատարանը իր գործունէութիւնը շարունակում է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յուլիսի: Գնացքների երթեւեկութիւնը շարունակվում է պարբերաբար նախկին ժամանակի կարգով: Չեն երթեւեկում միայն Պրիմորսկի գծի վրայով, երկաթուղային գծի փչացած լինելու պատճառով: Քաղաքում լիակատար հանգիստ է: Հէրցենշտէյնի աճիւնը թաղվեց Տերրիօկում:

ԻՒԶՕՎԿԱ, 21 յուլիսի: Գործադուլ արին Կարպօվի հանքերի 3000 բանւորները, նպատակ ունենալով աջակցել Ռուտչենկօվսկի հանքերի բանւորների գործադուլին:

ՄԻԼԱՆ, 21 յուլիսի: Շինարարական արհեստի ունգարական և իտալական շէնքերը այրվեցին, վնասները 4 միլիոնի է հասնում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ 23 յուլիսի: «Прав. Вѣстн.»-ում տպված է Աստրախանի նահանգապետի պաշտօնակատարի հեռագրի պատճէնը ուղղված ներքին գործերի մինիստրին: «Յուլիսի 17-ին Աստրախանում Ցարեւի պահեստի բաստիոնի վարժիչ խմբի շինութեան մէջ բռնվեց մի ագիտատոր թռուցիկների ահագին քանակութեամբ: Երևաց, որ բռնվածը ռէալական դպրոցից արձակված մի պատանի հրէայ է: Նրա բնակարանը խուզարկելու ժամանակ գտնվել են շատ անլէգալ գրվածքներ: Բռնվածը բանտ տարվեց»:

«Прав. Вѣсти.»-ում տպված է, որ Ֆինլանդիայի իշխանութիւնները Հէրցենշտէյնի սպանութեան առիթով քննութիւն են կատարում: Աջողվել է առ այժմ բռնել երկաթուղային ժանդարմական օֆիցեր Զապօլսկուն, հիմնվելով այն բանի վրա, որ նրա մօտ յաճախ գնալ ու գալ են ունեցել ինչ-որ անծանօթ անձինք: Միւս կողմից յանցաւորներին բռնելու համար ոստիկանական վարչութիւնն է իր կողմից եռանդուն միջոցներ ձեռք առել: Լրագիրների տեղեկութիւնների համաձայն երեկ ձերբակալել են 18 հոգու, կասկածելով որ վերոյիշեալ անձինք մասնակցութիւն ունեն Հէրցենշտէյնի սպանութեանը: Քննութիւնը կատարում է Ֆինլանդիայի դատախազ Պէլսօնը

ՀԵԼՍԻՆԳՖՈՐՍ, 22 յուլիսի: Կայացաւ երեկոյեան խորհրդակցութիւն՝ կարմիր գվարդիայի գոյութիւնը բարձելու միջոցներ գտնելու համար:

23 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 յուլիսի: Յուլիսի լոյս 22-ի գիշերը կայացաւ ժողովրդական ազատութեան կուսակցութեան կենտրոնական կոմիտէի նիստը: Քննվում էր իշխանութիւնների Հէրցենշտէյնի կնոջը արած նախազգուշացումը, որ ամուսնու դին թաղվի Տերրիօկում, որովհետեւ թաղման հանդէսի ժամանակ ծագած ցոյցի իւրաքանչիւր փորձը կը ճնշվի ոստիկանութեան ձեռքով զէնքի ոյժով: Կենտրոնական կոմիտէն ի նկատի առնելով հանգուցեալի այրու ցանկութիւնը, որոշեց Հէրցենշտէյնին թաղել Տերրիօկում:

ԿՈՒՐՍԿ, 22 յուլիսի: (Պաշտօնական թղթակցից): Յուլիսի 20-ին Սխադօստի գիւղի տօնավաճառում ընդհարում տեղի ունեցաւ ամբոխի և դրագունների միջև: Եկւոր ագիտատորներից գրգռված ամբոխը յարձակվեց իշխ. Բարեատինսկու կալուածքի վրա, ուր կանգնած էր դրագունների մի գումարտակ: Ամբոխից լսվեցին երեք տրաքոցներ, որոնց հետեւեց քարի տարափ: Գումարտակը հարկադրված էր դիմել զէնքի ոյժի, որով տուեց երեք համազարկ: Սպանված են 6 և վիրաւորված են երեք գիւղացի: Իսպրաւնիկը և մի քանի ստրաժնիկներ ջարդվածքներ ստացան: Հանգստութիւնը վերականգնած է:

ԻՒԶՕՎԿԱ, 22 յուլիսի: Գիշերս ոստիկանութիւնը և դրագունների երկու գունդ ձերբակալեցին Ռուտչենկօյի հանքերի բանւորների ագիտատորներին, երբ վերջիններս քնած էին: Իմանալով այդ միացած բանւորները, թւով աւելի քան 4000 մարդ, աշխատեցին ազատել ընկերներին: Բանւորների և դրագունների ընդհարման ժամանակ մի քանիսը վիրաւորվեցին սառը զէնքով: Ձերբակալվածները տարվեցին հսկողութեան տակ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 յուլիսի: Երկաթուղային գործադուլի մասին տարածված լուրերը սխալ դուրս եկան: Ասում էին, որ երբ այսօրվանից է սկսվելու գործադուլը: Պետերբուրգի երկաթուղային ամբողջ ցանցի երկարութեամբ հանգստութիւն է տիրում:

ԿՐԵՄԵՆՉՈՒԳ, 22 յուլիսի: Գտնված է սօցիալիստ-յեղափոխականների գաղտնի տպարանը: Գրաւված են 3 պուդ տառ և թռուցիկների շարվածքներ: Ձերբակալված է տանտէրը:

ՄՕՍԿՎԱ, 22 յուլիսի: Մօսկվայի երկաթուղային ամբողջ գծի վրա առայժմ հանգստութիւն է տիրում:

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ, 22 յուլիսի: Երեկոյեան 15 զինված անձինք գրաւեցին քաղաքի կենտրոնում գտնվող «Прогрессъ» տպարանը և ձեռնարկեցին տպել Վիբօրգում կազմած կոչը: Տպարանի ծառայողների աղաղակի վրա՝ հասաւ ոստիկանութիւնը: Չարագործները կարողացան փախչել:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 յուլիսի: Առաջին կարգի կապիտան իշխան Լիվէնը նշանակվում է «Память Азова» ականանաւի հրամանատար:

—Արտասահման մեկնեց մինիստրների խորհրդի նախկին նախագահ Գօրեմիկինը: Երեկ երեկոյեան գործադուլների թիւը հասնում էր 66,155 հոգու, չը հաշուելով ելեքտրաքարշի ծառայողներին: Դադարեց Նէվայի շոգենաւային ընկերութեան նաւերի երթեւեկութիւնը:

—Արտաքին գործերի մինիստրութեան մէջ մինիստրի նախագահութեամբ կայացաւ ռուս և ճապօնացի լիազօրների խորհրդակցութիւնը՝ Ռուսաստանի և Ճապօնիայի միջև ծովագնացութեան և առեւտրի նոր դաշինք կապելու համար:

ՕԴԵՍՍԱ, 22 յուլիսի: Նաւահանգստում հաց բեռնողների գործադուլին միացան և երկաթուղային ծառայողները, որոնք պահանջում են օրավարձը աւելացնել: Երկաթուղային վարչութիւնը մտադիր է կայարանը բոլորովին փակել:

ՏԵՐՐԻՕԿԻ, 22 յուլիսի: Հէրցենշտէյնի թաղումը կայացաւ երեկոյեան 7 ժամին: Դագաղին հետեւում էր բազմամարդ մի ամբոխ: Գերեզմանոցում ճառեր արտասանեցին Դումայի նախկին անդամներ Պետրունկեւիչ, Ռոդիչեւ և ուրիշները: Դրված էին բազմաթիւ պսակներ:

ՄՕՍԿՎԱ, 22 յուլիսի: Պետերբուրգից վերադարձաւ Գուչկօվը, որն հաղորդեց, որ նոր կաբինէտի վերաբերեալ՝ հասարակական գործիչների խորհրդակցութիւնը ընդհատված է շնորհիւ այն տարաձայնութիւնների, որ երեւան եկան, երբ քննվում էին այն մանրամասնութիւնները, թէ նոր կաբինէտը նախօրօք ինչ ձեռնարկութիւններ է յանձն առնելու: Հասարակական գործիչները պնդել են մի շարք անյետաձգելի բարենորոգումների վրա, որպէսզի հասարակութեան ցոյց տրվի, որ կառավարութիւնը մտադիր է վճռականապէս կանգնել լիբէրալ բարենորոգումների կողմը և չին բաւականացել այն յայտարարութեամբ, թէ բարենորոգումները աստիճանաբար են լինելու: Առաջիկայ նախընտրական կռւի մասին Գուչկօվը կարծիք է յայտնել, որ անհրաժեշտ է միացնել և համախմբել բոլոր առաջադիմական կուսակցութիւնները՝ Դումայի համար անցնելու համար այն անձանց, որոնք կողմնակից են խաղաղ օրէնսդրական աշխատանքին:

ՎԱՐՇԱՎԱ, 22 յուլիսի: Առաւօտեան 10 ժամին բանկի գործարանը ներս թափվեցին զինված աւազակներ և, սպառնալով ատրճանակներով, գողացան 8000 ռուբլի և, մի քանի անգամ կրակելով օգնութիւն կանչող երկրաչափի վրա, անյայտացան կառքով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 յուլիսի: Օրվայ ընթացքում գործադուլ արեց տպարանների մեծ մասը, ի թիւս որոց և „Новое Время“-ի տպարանը: Քաղաքում լիակատար հանգստութիւն է տիրում: Երկաթուղիները գործում են միանգամայն կանոնաւոր ու կարգին:

24 յուլիսի

ՎԱՐՇԱՎԱ, 23 յուլիսի: Ռեմբերտօվսկի զօրաբանակի թնդանօթաձիգ վաշտի ապստամբութեան մասին տարածված լուրերը սխալ են:

ՀԵԼՍԻՆԳՖՈՐՍ, 23 յուլիսի: Առաւօտեան փողոցները սովորական կենդանի տեսքն ունեն. ելեքտրաքարշը գործում է. բերդաստահում նուագում է երաժշտութիւնը: Բաժանվում են թերթիկներ, որոնցով կոչ է անվում գործադուլին չը համակրողներին՝ ժողովվել և բողոքել կարմիր գվարդիայի դէմ: Կօկը հրաժարվեց կարմիր գվարդիային առաջնորդելուց, իր մերժումը բացատրելով բարոյական և ֆիզիքական թուլութեամբ:

ԿՈՒՐՍԿ, 23 յ.: Երէկ Լիւկեանօվկա գիւղում չորս գիւղացիների ձերբակալելու համար եկած իսպրաւնիկը, սրա օգնականը և 10 ստրաժնիկ ենթարկվեցին տեղացի գիւղացիների զինված յարձակման: Կանչվեցին $\frac{1}{2}$ հարիւրեակ կօզակներ, որոնց վրա էլ գիւղացիները սկսեցին հրացաններ պարպել որով հարկադրված կօզակները պատասխանեցին նոյնպէս կրակով, որի ժամանակ սպանվեց մէկը և վիրաւորվեցին չորսը:

ՄՕՍԿՎԱ, 23 յ. Կուրլանդիայի զանազան տեղերում բռնված են պէս-պէս անձնաւորութիւններ, որոնք աշխատում էին թռուցիկներ տարածել զօրքերի մէջ:

ՍՕՖԻԱ, 23 յ.: Յուլիսի 21-ին, կէսօրվայ մօտերքը, ռումինական զինուորները օֆիցերների հրամանով կրակ բացին Սիլիստրայի մօտերը շրջող բուլղարական նաւի վրա: Բուլղարական նաւաստիները չը պատասխանեցին, թէև իրանցից վիրաւորվել էին մի նաւաստի և երկու կին, որ գտնվում էին բուլղարական ափի վրա: Կառավարական շրջաններում յոյս ունեն, որ այդ միջնադէպքը աջողութեամբ և անյապաղ կը վերջանայ:

ՀԵԼՍԻՆԳՖՈՐՍ, 23 յ.: Ի նկատի ունենալով տարածված լուրերը, որ վերաբերում են զօրքերի գործունէութեան, հաղորդվում է, որ զօրքերը չեն կրակել: Չորեքշաբթի օրը երբ սպիտակ գվարդիան կարմիր գվարդիայի կրակից սկսեց յետ նահանջել, կորցնելով 7 սպանված և 10 վիրաւորվածներ, կանչվեցին զօրքեր, որոնց երեւալով կարգը վերականգնվեց: Գիշերը երկաթուղային գծի և արուարձանի պաշտպանութեան համար զօրքեր են դրված: Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Կօկը հրաժարվեց կարմիր գվարդիայի հրամանատարութիւնից, վերջինիս փոխարէն իրան առաջնորդ հրատարակեց ոմն անիշխանական Լուստօ: Վիրաւորված Լուստօն հեռացվեց կազմակերպութիւնից կասկածելի վարմունքի պատճառով: Կօկը մեղադրված է դատաստանական իշխանութիւնից, բայց մինչև օրս նրան չէ աջողվել ձերբակալել: Կարմիր գվարդիան ցրված է և, ըստ լուրերի, գտնվում է Օգելբօյի շրջակայքում: Չորեքշաբթիվայ անընդհատ ընդհարումից յետոյ, ազգաբնակութիւնը սկսել է գրգռվել գվարդիայի դէմ: բանւորների իսկական վերաբերմունքը պարզել դժուարին է, սակայն, ըստ երեւոյթին, նրանց մէջ էլ երկպառակութեան սերմեր են ընկել: Գործադուլ են արել 4000 մարդ: Գիւղացիները անբաւական են կարմիր գվարդիայի գիւղերում երեւալով: Եղել են դէպքեր, որ վիրաւորներին մերժել են պատսպարել: Սենատը որոշել է՝ ձեռք առնել տալ կտրուկ միջոցներ ոչնչացնելու այդ կազմակերպութիւնը, որ յանցաւոր է ճանաչված: Սվէաբորգում կատարված քննութիւնը երեւան է հանել մի շարք փաստեր, որոնցից երեւում է, որ մեծ ապստամբութեան դաւեր են նիւթվելիս եղել: Ապացուցված է, որ նախաձեռնող եղել են ռուս յեղափոխականները, միւս կողմից ակտիւ գործունէութիւն է ցոյց տուել նաև կարմիր գվարդիայի մի մասը, որի ներկայացուցիչները այժմ անձնատուր են եղած. միացածները փախել են սակաւաթիւ նաւաստիների և թնդանօթաձիգ զինուորների հետ:

ՑԻՒՐԻԽ, 23 յուլիսի: Գրաւվում են անիշխանականների բրօշիւրները, որոնցով հրաւիրվում է բանւորներին ընդհանուր գործադուլ անել:

ՌԵՎԷԼ, 23 յուլիսի: Լոյս յուլիս 20-ի գիշերը «Память Азова» ականանաւի նաւաստիների ապստամբութեան մոմենտին Ռեվէլից 40 վերստ հեռաւորութեան վրա ընկած Պաւէնիկ նաւահանգստում կանգնած էին «II. Азова», «Арекъ» ականանաւերը, և «№ 106» և «№ 107» նաւերը: Ապստամբները գրաւելով «II. Азова»-ն, ուղղվեցին Ռեվէլ, նշան տալով նաւերին «հետեւել իրան». սակայն բոլոր նաւերի հաւատարիմ նաւաստիները իրանց օֆիցերների հետ միասին հրաժարվեցին հրամանը կատարել: Այն ժամանակ արդէն ապստամբները սկսեցին թնդանօթներ պարպել սակայն անհետեւանք: Բոլոր նաւերը անվնաս են: «№ 106» նաւը կորել է կղզիների մէջ: «Поспѣшный» մնացել է ջրի մէջ: Մնացած նաւերը եկան Ռեվէլի նաւահանգիստը: Կառավարիչ անձերը քննել են այդ նաւերը և գտել են նրանց բոլորովին կարգին:

ԼՕՆԴՕՆ, 23 յուլիսի: Շաբաթ օրը կայացաւ մի մեծ միտինգ, որին ներկայ էին անգլական և օտարերկրեայ հրէաները: Միտինգը կազմել էին տերրիտօրիալիստների կուսակցութիւնների կազմակերպութիւնները, որոնք նպատակ ունեն զանազան երկրներում հալածվող հրէաների համար ապաստարաններ և գաղթավայրեր գտնել: Գրող Զանգվիլը յայտնեց, որ այդ շարժման մեծ աջակցութիւն է ցոյց տալիս Ռօտշիլդը: Վերջում ընդունվեց մի եզրակացութիւն, որով բողոքվում էր Ռուսաստանում տեղի ունեցող հրէական ջարդերի դէմ:

ՀԵԼՍԻՆԳՖՈՐՍ, 23 յուլիսի: Յուլիսի 21-ի երեկոյեան մօտ զանազան քաղաքներից սկսեցին զօրքեր հասնել: Գիշերը հանգիստ անցաւ: Բերդէն են վերադառնում զինուորականների ընտանիքները: Ռմբակոծութիւնից շատ տներ վառվել են: Հեռագիրը հանգստացուցիչ լուրեր բերեց զանազան քաղաքներից: Տեղս հասաւ զինուորական դատարանը գեներալ Բիրշէֆի նախագահութեամբ՝ ապստամբութիւնը քննելու և ապստամբներին պատժելու համար:

ԻՒԶՕՎԿԱ, 23 յուլիսի: Գեներալ-նահանգապետը նախազգուշացնում է, որ ամենախիստ միջոցներ ձեռք կառնվեն, եթէ բանւորները հրաժարվեն աշխատել զօրքի հսկողութեամբ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յուլիսի: Ծովակալութեան տաճարում Կրօնշտադի, Սվէաբորգի և Ռեվէլի ապստամբութեան ժամանակ սպանված օֆիցերների յիշատակին հոգեհանգիստ կատարվեց: Ներկայ էին Բիրիլեւ, գերմանական ծովային գործակալը և նաւատորմղի պաշտօնեաները:

ՀԵԼՍԻՆԳՖՈՐՍ, 23 յուլիսի: Ֆինլանդական սօցիալ-յեղափոխական կոմիտէի նիստում քննվել է կարմիր գվարդիայի բռնութիւնները և բողոք է յայտնվել գործադուլի դէմ: Այդօրինակ բանաձեւներ ընդունվել են և գաւառական քաղաքների միտինգներում: Հասարակական կարծիքը միաբերան քննադատում է կարմիր գվարդիան, որ բանւորական խաղաղ կազմակերպութիւնից անցել է յեղափոխական վտանգաւոր ճանապարհը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, յուլիսի 23-ին: Լրագիրների գրաշարների մեծ մասը, տեսնելով որ մասնաւոր գործադուլներով չեն հասնում իրանց նպատակին, համաձայնվեցին յուլիսի 24-ին վերսկսել աշխատանքները: Քաղաքապետի կարգադրութեան համաձայն փակված է տպագրական գործով զբաղվող բանւորների միութիւնը, բնակարանը կնքված է, բայց ոչ ոք չի բանտարկված:

ՀԵԼՍԻՆԳՖՈՐՍ, յուլիսի 23-ին: Բանւորական կոմիտէն յայտնեց գործադուլի վերջանալու մասին: Կեանքը քաղաքում սովորական ընթացք ստացաւ: Այսօր թաղեցին սպիտակ գվարդիայի զինուորներին, որոնք սպանվել էին կարմիր գվարդիայի հետ եղած ընդհարումների ժամանակ: Ամբողջ քաղաքը յուղարկաւորվում էր մինչև գերեզմանատուն: Սպիտակ գվարդիայի զինուորները կարգով էին գնում: Դագաղի վրա դրած էին անհամար քանակութեամբ պսակներ: Կարգը չէր խանգարվում: Խաղաղութիւնը վերականգնվում է:

ԿԱՐԵԱԳԻՆԱ, 23 յուլիսի: «Սիրիա» շոգենաւի ջրասոյզ եղած ժամանակ խեղդվել են 300 մարդ, որոնց թւում և Բրազիլիայի արքեպիսկոպոսը. մի ճանապարհորդ կին, որի երեք որդիքը խեղդվեցին իր աչքի առաջ, խելագարվեց: Բոլոր պատճառը «Սիրիայի» հրամանատարն է եղել, որ ինքնասպանութիւն գործեց:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Դուէնը, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզական հ.
Կ. Մ. ՔԻՇՕՎԱՆԻ—$9\frac{1}{2}$—10 ժ. աչքի. ներքին և նեարդային:
Մ. Գ. ԱՒՇՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՄԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Կ. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՏԱՐԱԳՕՍԵԱՆՑ—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԱՔԱՐԲԻՒԼԱՆ—$1\frac{1}{2}$-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.
Ռ. Գ. ԱՐԵԱՆՑ—7—$7\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիում) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ
Գ. Ալթունեանի. ծխական դպրոցների համար.
ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ.
Դիմել՝ Էջմիածնի ճեմարանի քարտուղար, պ. Բօչարեանին և Ալէքսանդրօպօլ հեղինակին. 1—10

ՀՐԱՒԷՐ

Մողնու ս. Գէորգ եկեղեցու ծխականները հրաւիրվում են հինգշաբթի, յուլիսի 27-ին, երեկոյեան ժամը 6-ին, Մողնու եկեղեցի՝ ընտրելու չորս պատուիրակներ, որոնք վանքի և Բէթղեհեմի եկեղեցիների պատուիրակների հետ միասին պիտի ընտրեն Մարիամեան-Յովհաննեան դպրոցի համար չորս հոգաբարձուներ:

Ծխականների օրինական թիւ չը լինելու դէպքում երկրորդ և վերջնական ժողովը կայանալու է կիրակի, յուլիսի 30-ին, առաւօտեան ժամը 12-ին:

Այլ և հրաւիրվում են կիրակի, ամսիս 30-ին, առաւօտեան ժամը 12-ին, երկրորդ և վերջնական ժողովի՝ ընտրելու Էջմիածնի կենտրոնական ժողովի համար երեք պատուիրակներ:

Սիմէօն աւագ քահ. Չմշկեանց
(ե. կ.) 1—2

Լոյս տեսաւ և վաճառվում է
Ա. ԶԱՆԵԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
I պրակ. գինն է 8 կոպ.
Դիմել հայ գրավաճառներին: 1—10

Ես, ուսանող Ս. Կ—եանցս, փափագելով ստանալ բարձր կրթութիւն և դրա համար չունենալով ոչ մի միջոց, դիմում եմ օգնութեան բարերարներին, որոնք, յուսով եմ, չեն մերժի օգնութիւն հասցնել ինձ: Ես մտադիր եմ մտնել Նովօրօսսիյսկի Կայսերական համալսարանի բժշկական բաժինը, այդ պատճառով կարծում եմ, որ բժիշկները իրանց կողմից չեն մերժի ինձ օգնելու նիւթականով: Նուիրատւութիւնը խնդրում եմ ուղղել «Մշակի» խմբագրատուն:

Ուսանող Ս. Կ—եանց

ՀՐԱՒԷՐ

Բաթումի, Քութայիսի, Սուխումի և Արդուինի շրջանների պ. պ. պատուիրակները հրաւիրվում են Բաթում, կիրակի օրը, ամսիս (յուլիս) 30-ին, ծխական դպրոցի դահլիճում կազմելու ժողով և ընտրելու Բաթումի ընտրողական շրջանից ՄԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ առաջիկայ օգոստոսի 15-ին կայանալիք կենտրոնական ժողովին մասնակցելու համար:

Մեսրոպ աւագ քահ. Մելեան
(շ. ե.) 2—2

Նոր-Բայազէտի հայոց ծխական երկդասեան երկսեռ ուսումնարանների համար հարկաւոր է մի ԱՒԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ճեմարանաւարտ կամ դպրանոցաւարտ, շաբաթական 17 դասով, ընդամենը տարեկան 700 րուբլի ռոճիկով. ցանկացողներն կարող են դիմել նոյն դպրոցի հոգաբարձութեան, այս հասցէով. Новобаязетъ, попечительству армянскаго училища.

Որովհետև հոգաբարձութիւնը նոր աւագ ուսուցչի հետ պէտք է կազմի ուսուցչական խումբ, ուստի հին ուսուցչական խմբի բոլոր անդամներն համարվում են արձակված:

Անդամք հոգաբարձութեան՝ Հ. Տէր Միքայէլեանց, Խ. Բունիաթեանց, Գ. Բուրումեանց
(ա. օ.) 7—10

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Վաճառվում է Թիֆլիսի բոլոր գրավաճառանոցներում
ՀԻՒԱՆԴ ՄԱՐԴԸ
(Բ. ՇՏԵՐՆ)
ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ
գերմ. թարգմ.
Լ. ԲԱԲԱՅԵԱՆԻ
առանձին գրքերով լոյս են տեսել թարգմանչի նաև հետեւեալ աշխատութիւնները
1. Զ. Վերգա՝ Գիւղական Ասպետութիւն, թարգմ. գերմ. 15 կ.
2. Մ. Նորդաու՝ Հայրենասէր Իտալացին, թարգմ. գերմ. 10 կ.
3. Մ. Հալբէ՝ Սիստեմ, թարգմ. գերմ. 15 կ.
4. Ի. Աճօ՝ Երկու նովէլլա, թարգմ. գերմ. 10 կ.
5. Հ. Իբսէն՝ Հասարակութեան Նեցուկները թարգմ. գերմ. դրամա. 50 կ.
(ամ. օր.)

Ս. Գ. Շերմազանեան
Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը: Երեւանեան հրապարակ, տ. Փուրցէնօվի № 7. պօդեզդ Նոտար Մղերովի: (ե.կ.շ.) 31—100

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
(Ամառային շէնութիւն)
Երեքշաբթի, յուլիսի 25-ին
դերասանների մի խումբ Սօկօլօվսկու ղեկավարութեամբ, մասնակցութեամբ տ. Զաբէլի և պ. Օհանեանի
կը ներկայացնէ հայերէն լեզուով
I
ՏԻԿԻՆԸ ՍՊԱՍՈՒՄ Է
Վօդ. 1 գործող.
II
ԱՆԱՆՈՒՆ ԿՈՄԵԴԻԱ
Վօդ. 1 գործող.
Սկիզբն է երեկոյեան ժամը $8\frac{1}{2}$-ին
1—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ
Ռուսերէնից Հայերէն
Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ
Գինն է 8 ր., փառակազմ 9 ր., ճանապարհածախսով 10 ր., հեղինակին դիմողները ճանապարհածախս չեն վճարում: Լիակատար բառարան հայերէնից ռուսերէն: Բաժանորդագինն է 5 ր., առաջին բառարանիս բաժանորդների համար 4 ր.: Գրպանի բառարան ռուսերէնից հայերէն: Բաժանորդագինն է 2 ր. 50 կ.:
Դիմել ուղղակի հեղինակին հետեւեալ պարզ հասցէով՝ Тифлисъ, лексикографу А. Дагбашяну. Անձամբ հեղինակի հետ տեսնվել կարելի է առաւօտեան ժամերին (Барятинская ул. № 6 кв. Германа).
(կ. ե. հ.) 2—5

Արտանօվօղակի հայոց եկեղեցական ծխական դպրոցի հոգաբարձութիւնը սրանով յայտարարում է, որ դպրոցիս համար ուսուցիչներ արդէն վարձված են: Այն ուսուցիչների դիմումներին, որոնց չէ պատասխանված, ազատ են:
2—3

Ղզլարի հայոց երկսեռ դպրոցների համար հարկաւոր են՝ 1) մի աւագ ուսուցիչ, որ լինէր հմուտ մանկավարժ, շաբաթական 18 դասի և աւագ-ուսուցչութեան համար ստանալու է 1100 ր., 2) մի հմուտ երաժշտագէտ, որ դասաւանդելու է երգեցողութիւն և առարկաներ, նաև վարելու է եկեղեցիներում խմբապետի պաշտօն: Ռոճիկ շաբաթական 15 դասի և խմբապետութեան համար 850—900 ր. 3) հարկաւոր են 8 ուսուցիչ (որոնց թւում երկու ուսուցչուհի), ռոճիկները շաբաթական 18—22 դասով: Աւանդելի առարկաներն են. հայոց և ռուսաց լեզուներ, թուաբանութիւն, վայելչագրութիւն, գծագրութիւն և ձեռագործ ու կար և ձև: Լեզուների և թուաբանութեան դասագինն 40 րուբլի, մնացեալ առարկաներինը—35 ր.
(ե. հ. շ.) 3—3

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ա. և Ե. Գէորգեանների և Կ. Աւետիքեանց ընկերութեան խանութից ԵՐԵՒԱՆՈՒՄ գողացված են մուրհակներ, որոնց գումարները լրիւն վճարել է ընկերութեան անդամ Ե. Գէորգեանը Մօսկվայում մուրհակատէրերին և որոնց վրա արված են անվերադարձական մակագրութիւններ (безоборотныя надписи) Մօսկվայի հետեւեալ ֆիրմաների՝ 1) Ի. Գ. Կուկուշկին 1500 ռուբ. գրված 4 ապրիլի 1905 թ. առ 1-ն մարտի 1906 թ., իսկ մնացեալ երկուսը Բարանօֆների մանուֆակտուրային ընկերութեան, որոնցից՝ մէկ 5000 ր. գրված 21 մարտի 1905 թ. առ 27 դեկտեմբերի նոյն թւի և երկրորդը 3980 ր. 10 կոպ. գրված 29 մարտի 1905 թ. առ 1-ն մայիսի 1906 թւի:

Վերոգրեալի մասին մեր ընկերութիւնը յայտնում է ի գիտութիւն հիմնարկութիւնների և անձանց: Յայտարարված է նա՛ թէ ոստիկանութեան և թէ ուր հարկն է:

(ե. չ. հ.) 3—3

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթեւեկութիւնը)

(Ժամերը նշած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով):

	Փօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գի
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. ցե
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գի
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գի
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցե
Երեւանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գի
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 18 ր. գի
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	7 » 38 ». եր.	—	—	7 ժ. 06 ր. առ
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր. ցե
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր. ցե
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր. ցե
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գի
Երեւան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր. գի
Կարս հասնելը	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր. առ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Երկու սեռի անձանց համար
(Баку, уголъ Красноводск. и Меркурьевск. д. Набатовыхъ)
Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական եւ առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատեստատներ:
Կուրսերում աւանդվում են՝ 1) Առեւտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առեւտրական և բանկային. 3) Առեւտրական թղթակցութիւն. 4) Առեւտրական տնտեսագիտութիւն. 5) Առեւտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա:
Ուսումն սկսվելու է սեպտեմբերի 20-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայնօր կուրսերում առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը:
Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа) ուղարկվում են ձրիաբար: Օտարաքաղաքացիները դիմում են Баку, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову.
(ե. շ.) 5—30

„ՎԵՐՍԱԼ“
[ՀԻՒՐԱՆՈՑ]
Քաղաքի ամենակենտրոնական մասում
Վօրօնցովի արձանի մօտ,
ուր շաղկապվում են տրամվայի բոլոր գծերը: Համարները սկսած 1 րուբլուց և աւելի: Յարմար կերպով կահաւորված համարներ՝ բոլոր յարմարութիւններով: Բաղանիք, դուշ, տելէֆոն, էլէքտրական լուսաւորութիւն ընդհանուր շինութեան մէջ: Օդի և լոյսի առատութիւն: Կատարեալ մաքրութիւն և կարգապահութիւն: Խնդրում ենք չը լսել գործակալներին, երբ թէ ազատ համար չը կայ և այլն:
(կ. ե. հ.) 2—24
„ՎԵՐՍԱԼ“ հիւրանոց

Ֆինանսների նախարարութեան իշխանութեան տակ գտնվող
ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Հեղինակ «Առեւտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնասիրական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առեւտրական դպրոցներում և նրանց գրադարաններում:
ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
Երկու սեռի անձանց՝ գործնական ձեւով հաշուապահութիւն 4 ամսում:
Ներկայ տարվայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և որոշ վճարով կամաւոր սղագրութիւն (стенографія):
Ընդունելութիւնն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան և 9-ից մինչև 11-ը առաւօտեան: Պարապմունքները սկսվելու են սեպտեմբերի 15-ից, պարբերական ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ: Ծրագիրն ուղարկվում է ձրի:
Դասընթացը աւարտողներին տրվում են ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատեստատներ:
Դրանից անկախ, բացված է քիչ պատրաստութիւն ունեցող անձերին համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար:
Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում Н. В. Абраамяну, Николаевская ул. № 22, ամենայն օր:
Վերեւում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում: Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու. ԳԻՆՆ է 3 ր. 50 կոպէկ: (հ. կ. ե.) 5—20

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва «Гермесъ» Мадат. 74. № 9